«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող
ուսումնական հաստատությունների համար

ԵՐԵՎԱՆ - 2009

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների համար նախատեսված «Պատմություն» դասընթացի ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության մասին օրենքը, միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրին ներկայացվող չափորոշչային պահանջները, աշխատանքային խմբի ներկայացրած ծրագրի նախագիծը և ԿԱԻ-ի Հայոց պատմության առարկայական հանձնաժողովի որոշումը:

«Պատմություն» դասընթացի ծրագրում տեղ են գտել Հայկական հարցի բոլոր փուլերը և հիմնական բովանդակությունը պարզաբանող հարցեր՝ սկսած ծագումից մինչև մեր օրերը: Ծրագիրը մշակվել է հանրակրթական դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի հետ սերտ կապի մեջ, որպեսզի հնարավոր լինի խուսափել ավելորդ կրկնություններից: Թողնվել են միայն այն հարցերը, առանց որոնց հնարավոր չէ լուսաբանել Հայկական հարցը: Ծրագիրը կազմված է 54 ժամի համար, որից 20-ը նախատեսվում է հատկացնել գործնական աշխատանքներին: Ծրագիրը բաղկացած է երկու մեծ բաժիններից և յոթ թեմաներից: Թեմաներն ունեն ուսումնասիրման համար նախատեսված հստակ ժամաքանակ: Գործնական աշխատանքների համար նախատեսված ժամերին, բացի փաստաթղթերի ուսումնասիրություններից, առաջարկվում է կազմել տարբեր տիպի գծակարգեր՝ քարտեզներ, սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ և այլ ուսումնադիտողական պարագաներ: Գործնական ժամերը կարելի է օգտագործել նաև էքսկուրսիաներ կազմակերպելու համար: Խիստ կարևոր է այցելությունները Ցեղասպանության թանգարան, պատմության և այլ թանգարաններ ու մշակութային վայրեր: Իսկ եթե հնարավորությունները թույլ չեն տալիս, ապա առաջարկվում է առավելագույնս օգտվել երկրագիտական (հայրենագիտական), պատմամշակութային օջախներից, ինչպես նաև համացանցային համապատասխան կայքէջերից, գիտահանրամատչելի ֆիլմերից:

Նոր դասընթացի գլխավոր նպատակն է զինել հայ երիտասարդությանը Հայկական հարցի վերաբերյալ խորը և կայուն գիտելիքներով, նպաստել նրա մեջ ազգային հիմնախնդիրները լուծելու պատրաստ հայ մարդու և քաղաքացու ձևավորմանը, դաստիարակել նրան մարդու և ժողովուրդների բնական և պատմական իրավունքները հարգելու, ցեղասպանությունը մերժելու և դատապարտելու, վառ ու անկեղծ հայրենասիրության ոգով:

Դասընթացի նպատակին հասնելու համար ուսուցման գործընթացում պետք է լուծել մի շարք խնդիրներ.

- Հայկական հարցի վերաբերյալ պատմական հարուստ նյութի ուսումնասիրմամբ երիտասարդությանը բերել այն համոզման, որ այնպիսի հիմնահարցեր, ինչպիսին են Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը ոչ միայն մեր, այլև համայն մարդկության ցավն են ու հիմնախնդիրը:

- Պատմական նյութի ուսումնասիրման ընթացքում հասնել նրան, որ երիտասարդությունը գիտակցի ազգային հիմնախնդրի շուրջ ժողովրդի բոլոր ուժերի համախմբման, նրա մտավոր և ֆիզիկական ներուժի կենտրոնացման անհրաժեշտությունը:

- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճշմարտացի լուսաբանումը հնարավորություն կտա երիտասարդությանը իմաստավորելու մեր ժողովրդի անցած ուղին, խուսափելու սխալներից ու վրիպումներից, դասեր քաղելու ներկայի և ապագայի համար:

- Հասնել այն բանին, որ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին գիտելիքներով զինված երիտասարդությունը գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, հայրենիքի բարգավաճման ու վերածնության գործին:

- Հայկական հարցի խորն իմացությունը պետք է ձևավորեն սեփական գործունեությունը ազգային շահերին, հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

- Դասընթացի կարևոր խնդիրներից է Հայոց պատմության և Հայկական հարցի պատմության դասընթացների միջև միջառարկայական կապերի ստեղծումը, որը կարող է ապահովել մեր պատմության մյուս կարևոր հիմնախնդիրների լուծումը:

«Պատմություն» առարկայի ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայկական հարց» հասկացությունը և նրա բովանդակությունը: Տեսակետներ Հայկական հարցի բովանդակության վերաբերյալ: Հայկական հարցը և հայրենիք, ազգ և պետություն հասկացությունները: Հայկական հարցի զարգացման հիմնական փուլերը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- «Հայկական հարց» հասկացության էությունը և բովանդակությունը:
- Հայկական հարցի վերաբերյալ եղած տեսակետները:
- Հայրենիք, ազգ, պետություն հասկացությունների բացատրությունը:
- Հայկական հարցի զարգացման հիմնական փուլերը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Ներկայացնել «Հայկական հարց» հասկացության էությունը և բովանդակությունը:
- Ներկայացնել և մեկնաբանել Հայկական հարցի վերաբերյալ եղած տեսակետները:
- Տալ հայրենիք, ազգ, պետություն հասկացությունների բացատրությունը:
- Հանգամանորեն ներկայացնել և համեմատել Հայկական հարցի զարգացման հիմնական փուլերը:
- Բացատրել, թե ինչ է ենթադրում «Ազգերի ինքնորոշման իրավունքը»:
- Հիմնավորել պատմական հայրենիքում ազգային պետություն ունենալու հայերի իրավունքը:
- Ներկայացնել «ազգ» հասկացության ընկալումը տարբեր դարաշրջաններում, ազգային զգացման և ազգային գիտակցության դերը ազգային գաղափարաբանության մեջ, ազգի գաղափարը արժևորող կամ ժխտող գաղափարախոսությունները, ազգային գաղափարախոսությունների բացարձականացման վտանգավորությունը, բերել համապատասխան օրինակներ, կատարել համեմատություններ:

- Ներկայացնել ազգային և սոցիալիստական գաղափարախոսությունների հարաբերակցությունը

ԲԱԺԻՆ Ի. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԻՑ ՄԻՆՉև 1920թ.

ԹԵՄԱ 1. Հայկական հարցի ծագումը և զարգացումը

Հայոց պետականության կորուստը: Հայկական հարցի ծագումը: Հայկական հարցը որպես ժողովրդական գիտակցության արտահայտություն (Սասունցի Դավիթ էպոս): Ազատագրական շարժումը և քաղաքական կողմնորոշման հիմնահարցը: Հայկական հարցի մուտքը Արևմտյան Եվրոպա և Ռուսաստան: Ազատագրական պայքարի զարթոնքը և բուռն վերելքը XVII-XVIII դդ.: Ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակումը: Պայքար համահայկական միասնական պետության ստեղծման համար:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- Հայոց պետականության կորստի պատմությունը:
- Հայկական հարցի նախապատմությունը:
- Հայկական հարցի լուծման առաջին ձեռնարկումների մասին:
- Ռուսաստանի և Հայկական հարցի առնչակցության մասին:
- Հայկական հարցի դրսևորումները ժողովրդի հավաքական գիտակցության և ժողովրդական բանահյուսության մեջ:
- Արցախի և Սյունիքի ազատագրական կռիվների և դրանց հետևանքների մասին:
- Էմինի ծրագրերի և գործունեության մասին:
- Ազատագրական պայքարի բուռն վերելքի մասին:
- Ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման և մշակման մասին:
- Համահայկական միասնական պետության ստեղծման համար պայքարի մասին:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Նկարագրել Հայոց պետականության կուրստի պատմությունը. վեր հանել դրա պատճառները, ցույց տալ հետևանքները:
- Ներկայացնել Հայկական հարցի նախապատմությունը:

- Ներկայացնել Հայկական հարցի լուծման առաջին ձեռնարկումները:
- Ցույց տալ Ռուսաստանի և Հայկական հարցի առնչակցությունը:
- Ներկայացնել Հայկական հարցի դրսևորումները ժողովրդի հավաքական գիտակցության և ժողովրդական բանահյուսության մեջ:
- Պարզաբանել Արցախի և Սյունիքի ազատագրական կռիվները և դրանց հետևանքները:
- Մեկնաբանել Էմինի ծրագրերը և գործունեության հիմնական գծերը:
- Ներկայացնել ազատագրական պայքարի բուռն վերելքը:
- Նկարագրել ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման և մշակման գործընթացը:
- Ներկայացնել Համահայկական միասնական պետության ստեղծման համար պայքարի պատմությունը:

ԹԵՄԱ 2. Հայկական հարցի միջազգայնացումը

Հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Հյակական հարցը Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերում: Հայաստանի պաշտոնապես ճանաչվելը որպես նվաճված երկիր: Հայկական հարցը և մեծ տերությունները: Հայկական հարցի լուծման զինված պայքարի փուլը: Հայկական հարցի լուծման թուրքական եղանակը: Հայկական հարցը և ազգային կուսակցությունները: Հայկական հարցի վերաբացումը: Հայկական հարցը Առաջին աշխարհամարտի տարիներին: Հայոց Մեծ եղեռնը: Հայ ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության և արվեստի մեջ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- Արևելյան հարցի հիմնական բովանդակությունը:
- Արևելյան հարցի և Հայկական հարցի հարաբերակցությունը:
- Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի հիմնական բովանդակությունը:
- Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության մասին:
- Հայկական հարցի լուծման զինված պայքարի փուլի մասին:

- Հայկական հարցի լուծման թուրքական եղանակի մասին:
- Ազգային կուսակցությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ:
- Հայկական հարցի բարձրացումը Առաջին աշխարհամարտի նախօրեին և ընթացքում:
- Հայոց Մեծ եղեռնի պատմությունը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Պարզաբանել Արևելյան հարցի հիմնական բովանդակությունը:
- Վեր հանել Արևելյան հարցի և Հայկական հարցի հարաբերակցությունը. համեմատել դրանք:
- Ներկայացնել Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի հիմնական բովանդակությունը. համեմատել երկու պայմանագրերը և գնահատել դրանք:
- Վեր հանել Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության հիմնական գծերը:
- Տալ Հայկական հարցի լուծման զինված պայքարի փուլի բնութագիրը:
- Մեկնաբանել Հայկական հարցի լուծման թուրքական եղանակը:
- Ներկայացնել հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումը Հայկական հարցի լուծման վերաբերյալ:
- Մեկնաբանել Հայկական հարցի բարձրացման ձեռնարկումները Առաջին աշխարհամարտի նախօրեին և ընթացքում:
- Ներկայացնել Հայոց ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը, փուլերը, ընթացքը և հետևանքները. պարզաբանել Հայոց ցեղասպանության պատճառները:
- Նկարագրել Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման պատմությունը. պարզաբանել ՀՀ-ի ստեղծման պատմական նշանակությունը. մեկնաբանել Հայկական հարցի պետական քաղաքականության առաջնահերթություն դառնալու պատմական իրողությունը. վեր հանել հայկական տարածքների նկատմամբ Ադրբեջանի և Վրաստանի նկրտումները:
- Ներկայացնել Հայկական հարցը ժամանակի միջազգային հարաբերությունների համատեքստում:

- Ներկայացնել Սևրի պայմանագրի բովանդակությունը. գնահատել այն:
- Վեր հանել և ցույց տալ Քեմալա-բոլշևիկյան քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ և դրա բացասական հետևանքները:

ԲԱԺԻՆ II. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 3. Հայկական հարցը 1918-1940թթ.

Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը. Հայկական հարցը որպես պետական քաղաքականություն: Ադրբեջանի և Վրաստանի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ: Հայկական հարցը միջազգային հարաբերությունների ոլորտում: Սևրի պայմանագիրը: Հայկական հարցը Քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների ոլորտում: Խորհրդային Հայաստանը և Հայկական հարցը: Հայկական հարցը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում: Հայ-վրացական և հայ-ադրբեջանական նոր սահմանների ձևավորումը: Հայկական սփյուռքի առաջացումը: Սփյուռքը որպես Հայկական հարցի նոր հանգրվան և պահանջատեր: Մեծ տերությունները և Հայկական հարցի ձախողումը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում: Հայկական հարցը և Ազգերի լիգան: Հայկական պատվիրակությունները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման, Հայկական հարցի պետական քաղաքականության առաջնահերթություն դառնալու, հայկական տարածքների նկատմամբ Ադրբեջանի և Վրաստանի հավակնությունների մասին:
- Հայկական հարցը միջազգային հարաբերությունների համատեքստում:
- Սևրի պայմանագրի բովանդակությունը:
- Հայկական հարցի և Քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների մասին:
- Խորհրդային Հայաստանի՝ Հայկական հարցում վարած քաղաքականության մասին:

- Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ստորագրման պատմության և դրանց հիմնական բովանդակության մասին:
- Հայ-վրացական և հայ-ադրբեջանական նոր ձևավորված սահմանների մասին:
- Հայկական սփյուռքի առաջացման մասին:
- Հայկական հարցի նոր հանգրվան և պահանջատեր դարձած սփյուռքի ձեռնարկումների մասին:
- Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության և Լոնդոնի ու Լոզանի կոնֆերանսների մասին:
- Ազգերի լիգայի գործունեության մասին:
- Հայկական պատվիրակությունների գործունեության մասին:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Հիմնական գծերով ներկայացնել Խորհրդային Հայաստանի՝ Հայկական հարցում վարած քաղաքականությունը:
- Պարզաբանել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը. համեմատել այդ պայմանագրերը, գնահատել և ցույց տալ դրանց հետևանքները:
- Ներկայացնել հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների ձևավորման սկզբունքները և գնահատել դրանք. տալ սեփական մոտեցումները և հիմնավորել դրանք:
- Տալ հայկական սփյուռքի առաջացման պատճառները և հետևանքները:
- Ներկայացնել և մեկնաբանել Հայկական հարցի նոր հանգրվան և պահանջատեր դարձած սփյուռքի ձեռնարկումները:
- Ցույց տալ Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության բնույթը. վեր հանել Հայկական հարցի լուծման ձախողման պատճառները և հետևանքները Լոնդոնի ու Լոզանի կոնֆերանսներում:
- Պարզաբանել Ազգերի լիգայի գործունեության և Հայկական հարցի առնչակցությունը:
- Գնահատել հայկական պատվիրակությունների գործունեությունը. ցույց տալ նրանց գործունեության արդյունքները:

ԹԵՄԱ 4. Հայկական հարցը 1940-1960-ական թթ.

Հայկական հարցը Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Հայկական հարցի արծարծումը Խորհդային միության ղեկավարության կողմից (Հայկական տարածքների հարցը և Պոտսդամի խորհրդաժողովը): ԽՍՀՄ-ը և Հայկական հարցը հետպատերազմյան տարիներին: Հայրենադարձությունը 1946-1948թթ.:

Սփյուռքը որպես Հայկական հարցի միակ պահանջատեր և արծարծող: Համաշխարհային հայկական կոնգրեսը: Հայ դատի լուծման խաղաղ պայքարի քարոզչությունը 1950-ական թթ.:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- Երկրորդ աշխարհամարտի և այդ տարիներին Հայկական հարցի արծարծման մասին:
- Խորհդային միության ղեկավարության կողմից Հայկական հարցի արծարծման պատմության մասին:
- Հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ի վարած քաղաքականության և Հայկական հարցի հարաբերակցության մասին:
- Հետպատերազմյան տարիներին Հայկական հարցի բարձրացման պատմությունը:
- 1946-1948թթ. կազմակերպված հայրենադարձության մասին:
- Առժամանակ Հայկական հարցի միակ պահանջատեր դարձած սփյուռքի գործունեությունը:
- Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջացման և գործունեության մասին:
- 1950-ական թթ. Հայ դատի լուծման խաղաղ պայքարի քարոզչության մասին:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Ներկայացնել Երկրորդ աշխարհամարտի և այդ տարիներին Հայկական հարցի արծարծման պատմությունը:
- Մեկնաբանել Խորհդային միության դիրքորոշումը Հայկական հարցում և նրա ղեկավարության կողմից Հայկական հարցի արծարծումը:
- Պարզաբանել հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությունը և Հայկական հարցի հարաբերակցությունը:
- Ներկայացնել հետպատերազմյան տարիներին Հայկական հարցի բարձրացման միջոցառումները և արդյունքները:

- Գնահատել 1946-1948թթ. կազմակերպված հայրենադարձությունը:
- Ներկայացնել և մեկնաբանել առժամանակ Հայկական հարցի միակ պահանջատեր դարձած սփյուռքի գործունեությունը:
- Պարզաբանել Համաշխարհային հայկական կոնգրեսի առաջացման գործընթացը և գնահատել նրա գործունեությունը:
- Ներկայացնել և գնահատել 1950-ական թթ. Հայ դատի լուծման խաղաղ պայքարի քարոզչության մարտավարությունը:

ԹԵՄԱ 5. Հայկական հարցի նոր դրսևորումները 1960-1980-ական թթ.

Սփյուռքահայությունը և Հայկական հարցի վերածնունդը: Խորհրդահայությունը և ազգային զարթոնքը: Այլախոհական շարժումը: Հայկական հարցը միջազգային ատյաններում: Ահաբեկչական գործողությունները որպես Հայկական հարցի հարկադրական այլընտրանք: Սփյուռքահայ մարտական կազմակերպությունները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- 1960-1980-ական թթ. սփյուռքահայության գործունեության և Հայկական հարցի նոր դրսևորումների մասին:
- Խորհրդահայության ազգային զարթոնքի և այլախոհական շարժման մասին:
- Միջազգային ատյաններում Հայկական հարցի բարձրացման մասին:
- Ահաբեկումների՝ որպես Հայկական հարցի լուծման այլընտրանքային ուղիների, պատմությունը և հետևանքները:
- Սփյուռքահայ մարտական կազմակերպությունների գործունեության մասին:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Նեկայացնել և պարզաբանել 1960-1980-ական թթ. սփյուռքահայության գործունեությունը և Հայկական հարցի նոր դրսևորումները:

- Ներկայացնել և գնահատել խորհրդահայության ազգային զարթոնքը և այլախոհական շարժումը:
- Ներկայացնել միջազգային ատյաններում Հայկական հարցի բարձրացման ձեռնարկումները և ցույց տալ դրանց արդյունքները:
- Պարզաբանել և գնահատել ահաբեկումների՝ որպես Հայկական հարցի լուծման այլընտրանքային ուղիների էությունը և հետևանքները:
- Ներկայացնել և գնահատել սփյուռքահայ մարտական կազմակերպությունների գործունեությունը. պարզաբանել հիմնական արդյունքները:

ԹԵՄԱ 6. Արցախյան ազատագրական պայքարը՝ Հայկական հարցի պատմության շրջադարձային փուլ

Ազգային հարցի սրումը ԽՍՀՄ-ում վերակառուցման տարիներին: Ղարաբաղյան շարժումը և նրա էությունը: Խորհրդային և թուրքական գործոնը Արցախի հիմնախնդրում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը: ԼՂ հիմնահարցի միջազգայնացումը: Ղարաբաղյան հարցը որպես Հայկական հարցի լուծման նոր փուլի մեկնակետ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- Վերակառուցման քաղաքականության, ազգային հարցի սրման, ազգերի ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների մասին:
- Ղարաբաղյան շարժման մասին:
- Արցախյան հիմնախնդրում ԽՍՀՄ-ի քաղաքականության և թուրքական գործոնի մասին:
- ԼՂ-ի անկախության գործընթացի և ԼՂՀ-ի ստեղծման մասին:
- ԼՂ-ի հիմնահարցի միջազգայնացման և հիմնախնդրի կարգավորման գործում միջազգային կառույցների գործունեության մասին:
- Արցախյան հարցը որպես Հայկական հարցի մասնակի լուծման օրինակ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Պարզաբանել վերակառուցման քաղաքականության էությունը:

- Վերակառուցման քաղաքականության համատեքստում ներկայացնել ԽՍՀՄ-ի տարածքում ազգային հարցի սրման և տարածքային հինախնդիրների առաջացման օրինակներ:
- Մեկնաբանել ազգերի ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների էությունը, հիմնավորել սեփական մոտեցումները:
- Ներկայացնել Ղարաբաղյան շարժման պատճառները, սկիզբը և ընթացքը. հիմնավորել շարժման արդարացի բնույթը:
- Ներկայացնել Արցախյան հիմնախնդրում ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը և թուրքական գործոնի դերը:
- Ներկայացնել ԼՂ-ի անկախության գործընթացը և ԼՂՀ-ի ստեղծման անհրաժեշտությունը:
- Պարզաբանել ԼՂ-ի հիմնահարցի միջազգայնացման գործընթացը և ներկայացնել հիմնախնդրի կարգավորման գործում միջազգային կառույցների գործունեության արդյունքները:
- Ներկայացնել Ղարաբաղյան հարցը որպես Հայկական հարցի լուծման նոր փուլի մեկնակետ:

ԹԵՄԱ 7. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը և Հայկական հարցը

ՀՀ անկախության հռչակումը: ՀՀՇ վարչակազմը և Հայկական հարցը: Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որպես ՀՀ նոր իշխանությունների արտաքին քաղաքականության կարևոր ուղղություն: Հայ-թուրքական հարաբերությունները և Հայկական հարցը: Հայ-ադրբեջանական հարաբերությունները և ԼՂ հիմնահարցի կարգավորման ուղիների որոնումը: Հայ-վրացական հարաբերությունները և Հայկական հարցը: Իրանի վերաբերմունքը ԼՂ-ի հիմնահարցի և Հայ դատի նկատմամբ: Հայ-ռուսական հարաբերությունները և Հայկական հարցը: ԱՊՀ-ն և Հայկական հարցը: ՀՀ-ի հարաբերությունները ԱՄՆ-ի և Եվրամիության հետ. Հայկական հարցը: Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Թուրքիայի պայքարն ընդդեմ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման: Հայկական հարցի լուծման հեռանկարները: Հայ դատի և Արցախյան ազատամարտի արտացոլումը ժամանակակից գրականության և արվեստի մեջ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- ՀՀ անկախության գործընթացը:
- Հայկական հարցում ՀՀՇ վարչակազմի վարած քաղաքականության մասին:
- Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ նոր իշխանությունների վարած քաղաքականության մասին:
- Արդի փուլում հայ-թուրքական հարաբերությունների և Հայկական հարցի մասին:
- Հայ-ադրբեջանական հարաբերությունների և ԼՂ հիմնահարցի կարգավորման ուղիների մասին:
- Հայ-վրացական հարաբերությունների և Հայկական հարցի մասին:
- ԼՂ հիմնահարցի և Հայ դատի նկատմամբ Իրանի վերաբերմունքի մասին:
- Հայ-ռուսական հարաբերությունների և Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մասին:
- ԱՊՀ-ի և Հայկական հարցի առնչակցության մասին:
- ՀՀ-ի՝ ԱՄՆ-ի և Եվրամիության հետ ունեցած հարաբերությունների և Հայկական հարցի մասին:
- Միջազգային նոր հարաբերությունները և Հայկական հարցը:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը արդի փուլում:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ Թուրքիայի վարած քաղաքականության մասին:
- Հայկական հարցի լուծման հեռանկարների մասին:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- Պարզաբանել ՀՀ անկախության գործընթացը:
- Մեկնաբանել և գնահատել Հայկական հարցում ՀՀՇ վարչակազմի վարած քաղաքականությունը:
- Ներկայացնել Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ նոր իշխանությունների վարած քաղաքականությունը:
- Ներկայացնել հայ-թուրքական հարաբերությունները արդի փուլում և Հայկական հարցը:

- Մեկնաբանել հայ-ադրբեջանական հարաբերությունները և ԼՂ հիմնահարցի կարգավորման ուղիները. տալ Ղարաբաղյան հարցի լուծման սեփական տեսակետը. հիմնավորել այն:
- Պարզաբանել հայ-վրացական հարաբերությունները արդի փուլում և Հայկական հարցի առնչակցությունը:
- Պարզաբանել ԼՂ հիմնահարցի և Հայ դատի նկատմամբ Իրանի վերաբերմունքը:
- Մեկնաբանել հայ-ռուսական հարաբերությունները և Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքը:
- Ներկայացնել ԱՊՀ-ի և Հայկական հարցի առնչակցությունը:
- Ներկայացնել ՀՀ-ի՝ ԱՄՆ-ի և Եվրամիության հետ ունեցած հարաբերությունները և Հայկական հարցը:
- Մեկնաբանել Միջազգային նոր հարաբերությունները և Հայկական հարցը:
- Ներկայացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը արդի փուլում:
- Գնահատել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ Թուրքիայի վարած քաղաքականությունը:
- Պարզաբանել Հայկական հարցի լուծման հեռանկարները. տալ Հայկական հարցի լուծման սեփական տեսակետը. հիմնավորել այն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ԹԵՄԱ	ԺԱՄ	ՏԵՍԱԿԱՆ	ԳՈՐԾՆԱԿԱՆ
Ներածություն	2	2	0
1. Հայկական հարցի ծագումը և զարգացումը	6	4	2
2. Հայկական հարցի միջազգայնացումը	10	6	4
3. Հայկական հարցը 1918-1940թթ.	8	6	2
4. Հայկական հարցը 1940-1960-ական թթ.	6	4	2
5. Հայկական հարցի նոր դրսևորումները	4	2	2
6. Արցախյան ազատագրական պայքարը՝ Հայկական հարցի պատմության շրջադարձային փուլ	4	2	2
7. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը և Հայկական հարցը	14	8	6
Ընդամենը	54	34	20

Պատմության դասավանդման մեթոդիկան միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում (մեթոդական երաշխավորություններ)

Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը

Ճանաչողական կարողությունների զարգացումը, գիտելիքների ձևավորումը և դաստիարակությունը ուսուցման երեք՝ իրար հետ կապակցված կողմերն են: Հատկապես՝ ուսումնական նյութի ծավալը որոշելիս կարևոր է նկատի ունենալ սովորողների զարգացման հետ կապված աշխատանքների անցկացումը, անհրաժեշտ է դաստիարակության խնդիրների հատուկ մշակում:

Ըստ Վիգոտսկու և Ռուբինշտեյնի՝ ուսուցումն ու դաստիարակությունը չեն հանգեցնում զարգացմանը, սակայն այն տեղի է ունենում ուսուցման և դաստիարակության ընթացքում: Երեխան զարգանում է սովորելով:

Պատմության դասավանդման ցանկացած ձև այս կամ այն չափով զարգացնում է սովորողներին: Սակայն զարգացումը պետք է բավարար լինի, հակառակ դեպքում տեղի է ունենում անհամաչափություն սովորողների ճանաչողական ուժերի և ուսումնական աշխատանքի ծավալի մեծացման և բարդացման միջև:

Անձի ճանաչողական հատկությունների (ընկալում, դատողություն, հիշողություն և այլն) դրական փոփոխությունների հետևանքով զարգանում է սովորողի նույն ժամանակում ավելի շատ, շուտ և խորը յուրացման ընդունակությունը: Հետևաբար՝ ուսուցումը հանդիսանում է իսկապես զարգացնող, եթե այն ձևավորելով գիտելիքներ և դաստիարակելով՝ կատարելագործում է անձի ճանաչողական կարողությունները և դա անում է նպատակաուղղված:

Ուսուցումը զարգացնում է դատողությունը, եթե սովորողը ոչ միայն ձեռք է բերում պատմական գիտելիքներ, այլ նաև յուրացնում է այդ գիտելիքները ձեռք բերելու միջոցները (սովորում է սովորել): Օրինակ՝ եթե դասախոսը միայն հաղորդում է, որ կապիտալիստական արտադրությունը ավատատիրականից առաջադիմական է, դա քիչ է զարգացնում սովորողին, այս գնահատականը ներկայացնում է ուրիշի մտածողական գործունեության արդյունքը, որի մեխանիզմը սովորողների համար մնում է անծանոթ: Անհրաժեշտ է սովորողներին սովորեցնել ինքնուրույն գնահատել արտադրության ձևերը, իսկ դրա համար նրանց պետք է հաղորդել համապատասխան գիտելիքներ վերլուծության, համեմատության մասին:

Սովորողների ճանաչողական գործունեությունը

Պատմական գիտելիքների յուրացումն իրականացվում է սովորողների բազմակողմանի, ակտիվ և ստեղծագործական գործունեության ընթացքում:

Պատմության ուսումնական ճանաչողության հիմքում ընկած են զգացմունքները և ընկալումները, մեծ մասամբ՝ տեսողական և լսողական: Պատմական իրադարձությունների, երևույթների մասին գիտելիքները վերցվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից: Տեղեկության ստացումը ոչ միայն պարտադիր է, այլև հանդիսանում է ուսումնական ճանաչողական գործունեության սկզբնական փուլը: Պատմության ուսուցման ճանաչողության մեջ մեծ տեղ են գրավում առարկայական և պատկերավոր (արտահայտչական) զննականությունը, քարտեզները, փաստաթղթերը: Մեծ է նաև նկարագրության և պատմելու դերը:

Սովորողների կողմից փաստական գիտելիքների յուրացման ընթացքը չի կարող անջատվել դրա ըմբռնումից. դա գիտելիքների ուղղակի փոխանցում չէ, որի ընթացքում ակտիվ է միայն դասախոսը: Պատմական փաստերի էությունը կարող է գիտակցաբար յուրացվել միայն սովորողների մտագործունեության ընթացքում:

Իրենց բնույթով տարբեր գիտելիքները ձևավորման ընթացքում սերտորեն «համագործակցում են» իրար հետ: Հասկացությունների ձևավորումը հենվում է փաստերի, կոնկրետ պատկերների իմացության վրա:

Պատմության ճանաչողության ընթացքում սովորողի միտքը շարժվում է կոնկրետից դեպի ընդհանրացնողը, ընդհանրացնողից՝ կրկին դեպի կոնկրետ, բայց հասկացությունների գիտակցման ավելի բարձր մակարդակով: Այդ հիմքի վրա յուրացվում են նոր փաստեր, իսկ նախորդները վերաիմաստավորվում են: Դա սովորողների մտավոր զարգացման և պատմական գիտելիքների մակարդակի բարձրացումն է:

Ուսուցման ընթացքում բարձրանում է սովորողների՝ պատմության ուսանելիությունը: Ուսանելիության տակ հոգեբանությունն ու մանկավարժությունը հասկանում են սովորողի կողմից գիտելիքները յուրացնելու ունակությունը: Ուսանելիությունը կախված է մարդու ընդհանուր զարգացածությունից, գիտելիքների պաշարից և համակարգվածությունից, ճանաչողական գործունեության միջոցների տիրապետումից:

ՄԵԹՈԴՆԵՐ, ՀՆԱՐՆԵՐ, ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցման մեթոդները և դրանց դասակարգումը

ա) Պատմական նյութի դասավանդման մեթոդների առանձնահատկությունները

Պատմության ուսուցումը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում դասախոսի և սովորողի համատեղ գործունեության միջոց են:

Մեթոդը ճանապարհ է, որով դասախոսը սովորողին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն, նրա մտավոր ուժերի զարգացման ուղի: Մեթոդները պատասխանում են ինչպե՞ս սովորեցնել հարցին: Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրված արդյունք: Դասավանդման մեթոդի սուբյեկտը և օբյեկտը սովորողն է:

Շատ հազվադեպ է պատահում որևիցե մեթոդի մաքուր կիրառումը:

Վերջին տասնամյակներում պատմության մեթոդիկայում մշակվել և կիրառվում են ուսուցման նոր մեթոդներ: Ներկա փուլում ուսումնական հաստատություններին պետք են ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները, հետևապես նաև՝ տեսական մտածողությունը: Բացի դրանից՝ մեթոդները ուսուցմանը պետք է տան զարգացնող բնույթ:

Եվ հաշվի առնելով այս անհետաձգելի խնդիրները՝ մի շարք դիդակտիկներ սկսեցին որոնել ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ: Պ. Ս. Լեյբենգրուբը պատմության ուսուցման մեթոդները դասակարգել է ըստ ուսուցման նպատակների, տրամաբանական կատեգորիաների, սովորողների գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, դասախոսի և սովորողների ուսումնական գործունեության բնույթի:

Դիդակտիկներ Մ. Ն. Սկատկինը և Ի. Յա. Լերները, որպես արդյունավետ մեթոդներ, առաջարկեցին բացատրական–ցուցադրական, ռեպրոդուկտիվ (վերարտադրական), մասնակի–որոնողական և հետազոտական մեթոդներ: Դանիլովը և Եսիպովը առաջարկեցին նոր գիտելիքների ձեռքբերման գործում հմտություններ և կարողություններ մշակող, ստուգող և գնահատող մեթոդներ: Մահմուտովը կարևորեց գիտելիքներն արթնացնող ու համախմբող, հրահանգչական, պրոբլեմային շարադրանքի, էվրիստիկական զրույցի, հետազոտական մեթոդները: Սակայն դրանցից ո՞ր համակարգը պետք է համարել ավելի արդյունավետ: Չի կարելի մեթոդների որևէ համակարգ համընդհանուր դարձնել: Ավելի ճիշտ կլինի մեթոդների համակարգը զուգակցել իրար: Պատմության

դասախոսի խնդիրն է դասավանդելիս կիրառել ժամանակակից առաջավոր մեթոդներն ու հնարները:

Պատմության դասավանդման հաջողության կարևոր պայմաններից մեկը մեթոդի ճիշտ ընտրությունն է:

Ինչպես մյուս առարկաների, այնպես էլ պատմության ուսուցման մեջ մեթոդների ընտրության հարցը մանկավարժական բարդ խնդիր է, որի ճիշտ լուծումից է կախված դասի և ուսուցման արդյունավետությունը:

բ) Մեթոդների դասակարգումը

Ընդունելի է մեթոդների այն դասակարգումը, որը հաշվի է առնում սովորողների գիտելիքների աղբյուրը և նրանց գործունեության բնույթը: Այդ դասակարգմամբ ընդհանուր դիդակտիկայում մեթոդները բաժանվում են 4 հիմնական խմբի: Այս դասակարգումը առաջարկել է Վագինը, իսկ կատարելագործել՝ Գորան:

Առաջինը *խոսքային մեթոդն է,* որի մեջ մտնում են բանավոր շարադրանքի մեթոդը՝ իր տեսակներով և տարատեսակներով. զրույցի մեթոդը, տպագրված նյութերի, գրքերի և դասագրքերի վրա տարվող աշխատանքի մեթոդը: Խոսքը հաղորդակցվելու հնագույն միջոց է: Սոցիոլոգ Վիլբուր Շրամմը հաշվել է, որ 500 000 տարի պահանջվեց մարդուց բանավոր խոսքից գրավորին անցնելու համար, 5 հազար՝ ձեռագրից՝ տպագիր դազգահին և 500 տարի տպագրական դազգահից՝ հեռուստատեսությանը:

Խոսքը բնորոշ է և՛ բանավոր խոսքին, և՛ գրավոր տեքստերին: Ուստի ուսուցման այդ միջոցը բաժանվում է բանավոր և տպագիր–խոսքայինի:

Երկրորդը *զննականությունն* է՝ դրանք բոլոր տեսակի դիտումները, ցուցադրումները, էքսկուրսիաներն են:

Երրորդը *գործնական աշխատանքի մեթոդն է,* երբ տրվում են տարբեր տիպի գրավոր աշխատանքներ, տրամագրեր, գրաֆիկական աշխատանքներ, վարժություններ և այլն:

Չորրորդը *սովորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդն է.* ինքնուրույն աշխատանք դասարանում, արտադասարանական աշխատանքի ժամանակ, տանը՝ դասագրքով, սկզբնաղբյուրներով, ուսումնական պիտույքներով աշխատելիս և այլն:

Այս չորս խումբ մեթոդները կիրառելիս պետք է հաշվի առնել պատմության դասավանդման առանձնահատկությունները և պարզել, թե դրանք որքանով են համապատասխանում նրա ուսուցման խնդիրներին: Օրինակ՝ եթե դասախոսը կազմակերպում է պատմական փաստաթղթերի կամ վավերագրական նյութերի վրա աշխատանք, որը ենթադրում է սովորողի ինքնուրույնություն, նպատակահարմար է կիրառել զրույցի մեթոդը:

Մի այլ դեպքում, ասենք, եթե սովորողներին հանձնարարվում է դասագրքում զետեղված նկարի բովանդակության վերլուծություն, պետք է դիմել զննականությանը: Իբրև տնային ինքնուրույն աշխատանք՝ կարելի է հանձնարարել նկարի կամ պատմական նյութի շուրջ գրել շարադրություն:

Եթե անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել նախնադարյան աշխատանքային գործիքներին (քար), դասախոսը դասարան է բերում դրանք, գրատախտակի վրա անում զանազան գծագրեր, այս դեպքում նա դարձյալ դիմում է զննականությանը: Իսկ եթե պետք է ծանոթացնել որևէ ապստամբության ընթացքին, դասախոսը դիմում է խոսքային մեթոդին՝ վառ, պատկերավոր պատմելուն և պատմական փաստերի հիման վրա սովորողներին մղում է ինքնուրույն եզրահանգումների՝ օգտագործելով ամրապնդող զրույցի մեթոդը:

գ) Հնարների բազմազանությունը

Մեթոդի բաղկացուցիչ մասն են հնարները:

Հնարը մեթոդի տարրն է կամ նրա մասնակի դրսևորումը: Հնար ասելով հասկանում ենք առարկաների հետ գործողությունը, ինչպես նաև խոսքային կամ գրավոր–գծագրային գործողությունները: Հնարը կարելի է տեսնել կամ լսել: Այսպիսով՝ մեթոդական հնարները կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված գործողություններ են: Ուսուցման ժամանակ մեթոդը կարող է ունենալ բազմազան կիրառական հնարներ: Օրինակ՝ պատմելու մեթոդի ժամանակ կարող ենք կիրառել գրատախտակն օգտագործելու, նկարներ ցուցադրելու հնարները: Հնարավոր է, որ միևնույն հնարը հանդես գա տարբեր մեթոդներ կիրառելիս: Բացի այդ՝ դասավանդելիս հնարը կարող է հանդես գալ որպես մեթոդ: Օրինակ՝ կինոդասերի ժամանակ ցուցադրումը դառնում է մեթոդ, իսկ պատմելը՝ հնար:

դ) Ուսուցման ձևերը

Մեթոդների ընտրության ժամանակ միշտ պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, գիտելիքների մակարդակը: Այսպես, եթե ցածր դասարանում (6–րդ) դասախոսի շարադրանքը չի կարող երկար տևել (10–15 րոպե), ապա բարձր դասարաններում (10–12–րդ) դրան կարելի է մի ամբողջ ժամ տրամադրել:

Պատմության ուսուցման խոսքային մեթոդում իր ծանրակշիռ տեղն ունի բանավոր շարադրանքը՝ դասախոսի պատմելը, որը երբեմն բարձր դասարաններում ստանում է դպրոցական դասախոսության բնույթ: Բանավոր շարադրանքն ունի մի շարք տարատեսակներ՝ բացատրություն կամ պարզաբանում, վերլուծում, պատմողական–նկարագրական, համառոտ, բնութագրական, դատողական, հուզական պատմելը և այլն:

Խոսքային մեթոդների շարքում մեծ է զրույցի մեթոդի դերը: Չէ որ զրույցի միջոցով սովորողները մասնակից են դառնում ուսումնասիրվող փաստերի և երևույթների վերլուծությանը:

Մեծ է հատկապես էվրիստիկական զրույցի կիրառման նշանակությունը սովորողների մտածողական ունակությունների զարգացման գործում: Այն սովորողների առջև դնում է «ինչո՞ւ», «ինչպե՞ս» հարցերը և նպաստում է ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Ընդհանրապես, զրույցի մեթոդն ունի այն առավելությունը, որ կիրառվում է բոլոր դասարաններում, դասի բոլոր փուլերում, ինչպես հարցում–կրկնության, այնպես էլ ստուգման և ամփոփման ժամանակ:

Պատմություն առարկայի ուսուցման ընթացքում հոգեբանական հնարների ճիշտ կիրառումը վարժեցնում է սովորողների հիշողությունն ու երևակայությունը, շարժում նրանց հետաքրքրությունները, հարստացնում սովորողների միտքն ու խոսքը:

Հոգեբանական հնարների օգնությամբ զարգանում են դպրոցականների հոգեկան գործընթացները՝ զգայությունները, ըմբռնումը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքներն ու կամքը:

Մեթոդների ներկայացման օրինակներ

ա. Պատմական փոփոխությունների շրջանը

Փոփոխությունների շրջանը հիանալի ռազմավարություն է՝ պատմության դասերի ժամանակ դասագիրքը կամ ընթերցանության նյութերը ներկայացնելիս: Այս ռազմավարության կիրառումը ներառում է ստորև բերված քայլերը.

1. Ընտրել մի քանի ժամանակաշրջան, որոնք պետք է ընդգկվեն մի դասի մեջ: Ուղեղային գրոհի միջոցով սովորողներին հարցրեք, թե իրենց կարծիքով յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում ով կարող է պատկերված լինել: Նրանց ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, որ հարկավոր է մտածել մարդկանց խմբերի և ոչ թե անհատների մասին:

2. Ցուցապաստառի վրա ներկայացրեք պատմական փոփոխությունների շրջանը: Քննարկման ընթացքում նշեք, որ պատմությունը հակված է կենտրոնանալու այն մարդկանց վրա, ովքեր փորձում են լուծել փոփոխությունների հետևանքով առաջացած հիմնախնդիրները: Դասագրքի նյութից սովորողներին ներկայացվում են փաստեր պարունակող մանրամասներ՝ օգնելու, որ հասկանան այս կամ այն պատմական շրջանի խնդիրները և դրանց լուծման համար ձեռնարկված միջոցները: Ընդգծեք փոփո-

խության այն կարգերը (կատեգորիաները), որոնք ավելի հաճախ են հանդիպում պատմական տեքստերում:

- **Բնակչությունը՝** աշխարհագրական տվյալ տարածքի բնակչության աճը կամ նվազումը, կառուցվածքային փոփոխությունները՝ կապված այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են տարիքային տեղաբաշխումը կամ էթնիկական կազմը:
- **Տեխնոլոգիան՝** նոր հայտնագործությունները կամ նորարարությունները, որոնք ազդում են հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների վրա:
- **Միջավայրը՝** փոփոխություններ տարածաշրջանի ֆիզիկական աշխարհագրության կամ կլիմայական պայմանների մեջ:
- **Տնտեսական՝** փոփոխություններ մարդկանց ամենօրյա կյանքում և կենսապայմանների մեջ:
- **Քաղաքական՝** փոփոխություններ կառավարության ձևի, առաջնորդների էության, ընտրությունների, օրենքների մեջ, դատական վճիռների, դաշնագրերի և պատերազմների հետևանքով:
- **Համոզմունքներ՝** փոփոխություններ մարդկանց համոզմունքների կամ հավատալիքների մեջ, ներառյալ՝ կրոնական հավատալիքները, գաղափարները, տեսակետներն ու արժեքները:

3. Ուսանողներին հանձնարարեք որէև ձեռնարկից կարդալ մի գլուխ և ասեք, որ ուշադիր ծանոթանան նյութին՝ մարդկանց խումբը որոշելու համար: Այս գործողության համար որպես բարձրաձայն մտածելու օրինակներ ներկայացրեք վերնագիրը, խորագիրը և ենթավերնագրերը, գլխի նպատակները, դրանք նախօրոք կազմակերպող գործոնները, սկզբնաղբյուրներից վերցված հատվածները, նկարներն ու աղյուսակները: Ուսանողների հետ որոշեք, թե ովքեր են տվյալ գլխում հանդես եկող կենտրոնական գործող անձինք: Ո՞վ է պատկերված գլխում: Այս փուլում դեռևս անհատ անձնանց անուններ մի ընտրեք, բայց խնդրեք սովորողներին՝ ընդհանրացնել այն մարդկանց խմբերը, որոնք ընդգրկված կլինեն այս գործողությունների մեջ:

4. Սովորողներին հանձնարարեք շարունակել գլխի ուսումնասիրությունը՝ փնտրելու խնդիրների լուծման համար անհրաժեշտ այն բանալիները, որոնց հետ խումբը կարող է առնչություն ունենալ:

5. Սովորողներին խնդրեք կարդալ, հանձնարարեք աշխատել իրենց զույգի հետ և լրացնել «Պատմական փոփոխությունների շրջանի» գրաֆիկական կազմակերպչի դատարկ բլանկը: Հանձնարարեք նրանց՝ տեքստից ընտրել յուրաքանչյուր խմբի համար նկարագրական այն տեղեկությունները, որոնք կարող են փոփոխությունների տեղիք տալ: Խնդրեք պարզել, թե իրենց խնդիրները լուծելու համար յուրաքանչյուր խումբ ինչ գործողություններ է ձեռնարկել:

6. Սովորողների հետ քննարկեք, թե ինչպես են փոփոխությունները տարբեր ձեևերով ազդում մարդկանց վրա:

Խումբ (՞)	Խումբ (՞)	Խումբ (՞)
Ինչպիսի՞ հիմնախնդիրների էին հանդիպում նրանք	**Ինչպիսի՞ հիմնախնդիրների էին հանդիպում նրանք**	**Ինչպիսի՞ հիմնախնդիրների էին հանդիպում նրանք**
Ո՞ր փոփոխություններն առաջ բերեցին այդ հիմնախնդիրները	**Ո՞ր փոփոխություններն առաջ բերեցին այդ հիմնախնդիրները**	**Ո՞ր փոփոխություններն առաջ բերեցին այդ հիմնախնդիրները**
Ի՞նչ արեցին նրանք՝ հիմնա-խնդիրները լուծելու համար	**Ի՞նչ արեցին նրանք՝ հիմնա-խնդիրները լուծելու համար**	**Ի՞նչ արեցին նրանք՝ հիմնախնդիրները լուծելու համար**

բ. Պատմական հիշողության օղակներ

«Պատմական հիշողության օղակներ» ռազմավարությունը (Buehl, 1998) գաղափարի քարտեզագրման ձևերից է, որով շեշտադրվում են պատմության մեջ խնդիր/լուծում հարաբերությունները: Այս ռազմավարության կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

1. Սովորողների ուշադրությունը հրավիրեք այն հանգամանքի վրա, որ պատմությունը ոչ թե մեկուսացված փաստերի հավաքածու է, այլ ներկայացնում է պատմություններ՝ տարբեր հիմնախնդիրների և փոփոխությունների հետ առնչվող մարդկանց խմբերի մասին: Սովորողներին հանձնարեք վերլուծել իրենց երկրի պատմության գլխավոր ժամանակաշրջանները կամ փաստերը՝ ըստ խնդիր/լուծում տեքստային շրջանակի: Ո՞րն է հիմնական դրույթը: Ինչպե՞ս է այն առնչվում գլխում քննարկվող խնդիրների հետ: Ի՞նչ - գործ ունի այն տվյալ խնդիրների լուծման հետ: Ինչպե՞ս է այն կապված գլխում ընդգծված խնդիրների հետ:

2. Սովորողներին հանձնարեք՝ իրենց կարդացած հատվածից պարզել, թե որոնք են հիմնական ժամանակաշրջանները կամ փաստերը:

3. Սովորողներին հանձնարարեք աշխատել զույգերով և նշված ժամանակաշրջանների համար նկարել սեփական «Պատմական հիշողության օղակները»: Ավարտելուց հետո ցանկացողներին առաջարկեք՝ ամբողջ դասարանին հաղորդակից դարձնել

իրենց գրածին: Այս առաջադրանքի բաղկացուցիչ մասերից մեկն էլ սա է. սովորողները հասկանում են, որ ձեռքի տակ չունեն անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ բոլոր ժամանակաշրջաններն ու փաստերը օղակների չորս մասերում գրելու համար: Այս ռազմավարությունը գործնականում կիրառելուց հետո սովորողներին կարելի է հանձնարարել նոր նյութը յուրացնելու ընթացքում ինքնուրույն ստեղծել հիշողության օղակներ: Դասավանդվող գլխի վերաբերյալ հիշողության մի քանի օղակներ լրացնելու ընթացքում նրանք կսկսեն հասկանալ հիմնական ժամանակաշրջանների միջև գոյություն ունեցող փոխկապակցված հարաբերությունները:

Պատմական հիշողության օղակներ

.



Գնահատվող բանավեճ

Գնահատվող բանավեճը նման է խճանկարի, որի յուրաքանչյուր մասնիկը ամբողջի անբաժանելի մասն է: Ոչ մի սովորող չի կարող գերիշխել բանավեճում, քանի որ ցանկացած ելույթի համար ժամանակը խիստ սահմանափակ է (5-15 վայրկյան) և միայն խմբի անդամների բոլոր կարծիքները միասին կարող են քննարկվող թեմայի հստակ պատկերը կազմել:

Գնահատվող բանավեճը կարելի է համեմատել «ընկերական հանդիպման» հետ: Այդպիսի հանդիպումներում կարծիքների և տեղեկությունների փոխանակումը շատ

անկեղծ է, քանզի ոչ ոք հսկողություն չի իրականացնում, որպեսզի մի քանի րոպեից արտահայտի տվյալ թեմայի վերաբերյալ «միակ ճշմարիտ» տեսակետը: Գնահատվող բանավեճի, ինչպես և փոքր խմբերով հանդիպման դեպքում, մասնակիցները ձգտում են բանավեճին ներգրավել բոլորին՝ ինքնաբուխ կերպով հայտնելով իրենց կարծիքն ու ունեցած տեղեկությունը:

Դասի ժամանակ դասխոսը հաճախ գերիշխող դիրք ունի: Գնահատվող բանավեճի դեպքում սովորողներին հնարավորություն է տրվում զրուցել ընկերների հետ, լսել, թե նրանք ինչ են մտածում:

Ընթացքը

Բանավեճի 6-8 մասնակիցներ շրջանաձև նստում են դասարանի կենտրոնում, իսկ մյուսները դասախոսի հետ միասին տեղավորվում են նրանց շուրջը և լսում: Դասախոսը միավորներ է տալիս մասնակիցներից յուրաքանչյուրին՝ բանավեճում ունեցած ներդրման համար: Բանավեճը տևում է 8-20 րոպե՝ կախված թեմայից և սովորողների տարիքից: Թեմայից չշեղվելու համար բանավեճի մասնակիցներն առաջնորդվում են նախապես կազմված պլանով:

Գնահատվող բանավեճի հիմնական կանոնը

Բանավեճի ընթացքում վարքագծի ցանկացած տեսակ արժանանում է խրախուսական կամ տուգանային միավորների, որոնք գրանցվում են գնահատման թերթիկում (տես՝ վերջում):

Ուսուցիչը խրախուսական միավորներ է տալիս՝

- քննարկվող հիմնահարցի նկատմամբ որոշակի դիրքորոշում ունենալու, այլ խոսքով՝ սովորողի «կողմնորոշման» համար,
- փաստերի վրա հիմնված կամ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության տրամադրման համար,
- թեմային հավատարիմ մնալու (թեմայից չշեղվելու) համար,
- մեկ ուրիշ սովորողի՝ բանավեճի մեջ ներգրավելու համար:

Վերջին կետը ապահովում է մասնակիցների ակտիվությունը և կանխում բանավեճում սովորողների մի մասի մենաշնորհային դիրքը:

Սովորողները կարող են խրախուսական միավորներ ստանալ նաև ճշգրտող հարցերի և բանավեճը առաջ տանելու համար: Լսելու կարողության զարգացմանը նպաստում է միավորներ ստանալը քաղաքավարի վերաբերմունքի և ուշադրության համար այն դեպքում, երբ ինչ-որ մեկի պատասխանը հեռու է նախապես սահմանված թեմայից կամ էական չէ բանավեճի համար: Խրախուսական միավորներ կարելի է տալ

նաև համեմատություն անցկացնելու համար, ինչը վկայում է մտածողության բարձր մակարդակի մասին և նպաստում բանավեճի զարգացմանը:

Տուգանային միավորներ կարելի է տալ՝

- ընդհատելու,
- բանավեճի անցկացմանը խոչընդոտելու,
- մենաշնորհային դիրքի ձգտելու,
- անձի դեմ ուղղված (անձնական բնույթի) ելույթի,
- ոչ էական դիտողություններ անելու համար:

Գնահատվող բանավեճը սովորողներին մեծ բավականություն է պատճառում, հատկապես երբ սովորողները ներողություն են խնդրում որևէ մեկի խոսքն ընդհատելու համար: Սովորողը միավորներ չի կորցնում այն դեպքում, երբ քաղաքավարությամբ նահանջում է (դուրս է գալիս քննարկումից): Լուրջ թերություն է համարվում բանավեճը մենաշնորհելու ձգտումը, քանի որ մյուսները զրկվում են քննարկմանը մասնակցելու և հետևաբար՝ միավորներ վաստակելու հնարավորությունից: Ոչ էական դիտողությունները տուգանային միավորների են արժանանում՝ անկախ այն բանից, թե մասնակիցներից որևէ մեկը մատնանշել է դա, թե ոչ: Իբրև ոչ էական դիտողություն են որակվում բանավեճի ընթացքում արդեն օգտագործված տեղեկատվության կրկնումը և թեմային չառնչվող դիտարկումները:

Տուգանային միավորների օգնությամբ դասախոսը կարող է կարգուկանոն պահպանել և սրել բանավեճին ներկա սովորողների ուշադրությունը: Դասախոսը հաղորդում է նրանց, որ բանավեճի սկզբից սկսած նրանք կարող են տուգանային միավորներ ստանալ՝ առանց լրացուցիչ զգուշացման: Այդ միավորները հանվում են տվյալ սովորողի ստացած միավորների ընդհանուր գումարից: Բանավեճի ավարտից հետո դասխոսը հաշվում է սովորողների ստացած միավորները:

Ինչպես հաղթահարել գնահատման դժվարությունները

Միավորներ դնելը բանավեճի ընթացքում մի մարդու համար առաջին հայացքից կարող է դժվարին գործ թվալ, բայց իրականում այն բավական հեշտ է:

Սովորողներին բանավիճային խմբերում բաժանելուց հետո պետք է նախապատրաստել նրանց համար գնահատման թերթիկներ:

Վարքագծի ցանկացած տեսակի համար Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակներում պետք է գրել խմբի անդամների անունները: Ամեն անգամ, երբ սովորողները որոշակի բնույթի վարքագիծ են դրսևորում, պետք է նրանց անվան դիմաց նշան դնել:

Հավանաբար գնահատվող բանավեճին հատուկ է սուբյեկտիվիզմը, բայց այն ավելին չէ, քան գրավոր աշխատանքների գնահատման դեպքում: Գնահատվող

բանավեճը կիրառած դասախոսները հաստատում են, որ միավորներ տալը սովորաբար արդարացի է լինում: Ընդ որում, նրանք արագորեն գիտակցում են, որ համապատասխան քանակի միավորներ դնելու համար հաճախ բավարար է լինում նաև պատասխանի սկիզբը: Այսպես, երբ լսվում էր՝ «Կարծում եմ, որ...», «Իմ կարծիքով, դա...», «Եթե դա ինձանից կախված լիներ...», դա արդեն պարզորոշ վկայում է, որ սովորողը որոշակի վերաբերմունք ունի հիմնահարցի նկատմամբ: Փաստերի վրա հիմնված տեղեկատվության օրինակներ են (արժանանում է 2 միավորի) անունները, փաստական այլ տվյալները՝ վերցված դասագրքից կամ տեղեկատվական այլ աղբյուրներից:

Բանավեճում ունեցած ցանկացած ներդրման համար սովորողը միավորներ է ստանում միայն մի կատեգորիայի գնահատման թերթիկում. նույնիսկ եթե անգիր արտասանում է 3 փաստ միաժամանակ, ստանում է միայն 2 միավոր: Բացառություն է կազմում միայն լրացուցիչ խրախուսանքը (1 միավոր)՝ մեկ ուրիշին բանավեճի մեջ ներգրավելու համար:

Քանի որ դասխոսը չպետք է ընդհատի բանավեճի ընթացքը, ցանկալի է, որ նա քննարկման ընթացքում իր համար որոշ նշումներ անի և բացատրություն տա բանավեճի ավարտից հետո: Այսպես, կարող են լինել փաստերի սխալ ներկայացում, որոշակի հասկացություններ, որոնք պետք է առանձնացնել և պնդումներ, որոնք պետք է քննարկել ամբողջ դասարանով: Բանավեճի ավարտից հետո դասախոսը պետք է ամփոփի ինչպես բանավեճի ընթացքը, այնպես էլ այնտեղ հնչած փաստերն ու ներկայացված գաղափարները:

Բանավեճի ավարտից հետո սովորողները պետք է իմանան, թե քանի միավոր են ստացել: Նրանցից յուրաքանչյուրը կարող է իր համար գնահատման առանձին ամփոփաթերթ ստանալ: Դրա համար պետք է նախապատրաստել համապատասխան թվով թերթիկներ, որտեղ նշվում են ոչ միայն յուրաքանչյուրի ստացած միավորները, այլև ընդհանուր դիտողություններն ու, անհրաժեշտության դեպքում, համապատասխան գնահատման բացատրությունները:

Թերթիկներ լրացնելն ավելի քիչ ժամանակ է պահանջում, քան տվյալ թեմայով գրավոր աշխատանք ստուգելը: Պետք է սովորողներին նախապես զգուշացնել, որ նրանք կրկնության հնարավորություն չունեն, և դասախոսի նշանակած միավորները պետք է ընդունել որպես վերջնական արդյունք:

Դասախոսից բացի՝ գնահատման գործընթացին կարող են մասնակից դառնալ նաև սովորողները: Այս դեպքում պետք է լրացուցիչ ջանքեր գործադրել՝ գնահատման անաչառությունն ապահովելու համար:

Գնահատվող բանավեճի շնորհիվ սովորողը ձեռք է բերում ուրիշների հետ հաղորդակցվելու և դիմացինին ճիշտ հասկանալու կարողություններ:

Գ. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԵՏ

Սկզբնաղբյուրներ են համարվում նամակները, լուսանկարները, նկարները, թերթային կամ գիտական հոդվածները, իրերը, պատմական, իրավական փաստաթղթերը, գրական ստեղծագործությունները և այլն: Երկրորդային աղբյուրները սկզբնաղբյուրների վրա հիմնվող գրքերն են, հոդվածները: Օրինակ՝ դպրոցական դասագիրքը երկրորդային աղբյուր է: Բայց դասագրքում կարող են ներառվել սկզբնաղբյուրներ:

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից: Սկզբնաղբյուրներում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ տարբեր իրադարձությունների ու խնդիրների շուրջ: Այդ հանգամանքը սկզբնաղբյուրները դարձնում է կրթության գործընթացը խթանող միջոց: Մասնավորապես, սկզբնաղբյուրների հետ աշխատանքը հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն տեղեկացնել հակասությունների և տարաձայնությունների մասին, այլև նրանց մասնակից դարձնել դրանց քննարկմանը: Մասնակից դառնալով այդ բանավեճերին՝ սովորողները հնարավորություն են ստանում ավելի անմիջականորեն և ամբողջականորեն պատկերացնել քննարկվող նյութը: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն սովորողների գիտելիքները, հմտությունները, վերլուծական կարողությունները զարգացնելու գործում: Սովորողները հնարավորություն են ստանում, ուղղակիորեն առնչվելով նյութին, զարգացնել զարմանալու ունակությունը, քննադատական մտածողությունը, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու կարողությունը: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որոնք ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունը զարգացնող կարևոր գործիքներ են: Սկզբնաղբյուրների նյութերը կաղապարված, ադապտացված չեն: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունը: Շատ հաճախ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք: Ու քանի որ մեր կրթական համակարգում դասագիրքն ունի «սուրբ գրքի» կարգավիճակ, սովորողներին շատ քիչ հնարավորություն է տրվում հետազոտական աշխատանք կատարելու: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնելու իմաստներով:

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը փայլուն հնարավորություն է միջառարկայական կապերը զարգացնելու տեսանկյունից: Նկարները, ֆիլմերը, գրական աղբյուրները, պատմական և իրավական փաստաթղթերը ինտեգրատիվ գիտելիքներ հաղորդելու և հիմնարար քաղաքացիական հմտություններ ձևավորելու ազդեցիկ միջոցներ են:

Սկզբնաղբյուրների օգտագործումը ուսումնական գործընթացում

1. Ընտրության չափանիշները

Սկզբնաղբյուրները ուսուցման գործընթացում արդյունավետ օտագործելու համար շատ կարևոր է ընտրության չափանիշներ սահմանելը:

Սկզբնաղբյուրների ընտրության չափանիշներ են համարվում.

- Հետաքրքրության աստիճանը- Արդյո՞ք ընտրված սկզբնաղբյուրները սովորողների հետաքրքրությունների շրջանակում են: Որքանո՞վ են այդ սկզբնաղբյուրները հետաքրքիր, կարևոր, օգտակար, ուսումնասիրվող նյութին համապատասխան:

- Սկզբնաղբյուրի բարդության աստիճանը- Որքանո՞վ է սկզբնաղբյուրի բարդության աստիճանը համապատասխանում սովորողների կարողություններին: Ի՞նչ օգտակար նյութեր կարելի է տալ սովորողներին սկզբնաղբյուրը հեշտությամբ յուրացնելու համար, օրինակ, բառարան, մանրամասներ սկզբնաղբյուրի համատեքստի, ստեղծման նախապատմության մասին:

- Ծավալը- Ի՞նչ ծավալ ունի աղբյուրը: Ո՞ր հատվածը պետք է ընտրել սկզբնաղբյուրի հիմնական գաղափարները հաղորդելու համար:

- Տեսակետների բազմազանություն- Նշված թեմայի շուրջ արդյոք կա՞ն տարբեր տեսակետներ: Տեսակետների հավասարակշռվածությունը ապահովվա՞ծ է, թե՞ ոչ:

- Աղբյուրների բազմազանություն- Արդյո՞ք ընդգրկվել են տարբեր տեսակի աղբյուրներ (տպագիր, անտիպ, տեքստ):

- Հասանելիություն- Արդյո՞ք սովորողները կարող են գտնել աղբյուրները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

1. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԵՏ

«Կուսակցությունը պետք է շարունակի համառ ու հետևողական անհաշտ պայքարը դասակարգային թշնամու դեմ, բոլոր հակահեղափոխական գաղափարախոսությունների, մասնավորապես բուրժուական նացիոնալիզմի դեմ, նրա բոլոր տարատեսակներով հանդերձ, հատկապես ընդդեմ իմպերիալիստական բուրժուազիայի հավատարիմ գործակալ դաշնակիզմի, որը ներկայումս, սրվող ռազմական վտանգի պայմաններում, նորից գլուխ է բարձրացնում ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրում, հենվելով կուլակության կատաղի դիմադրության վրա: Հարկավոր է լրիվ մերկացնել բոլոր հակահեղափոխական գաղափարախոսությունների արմատները, նրանց պայքարի բոլոր եղանակները և նոր պայմաններում ժողովրդական զանգվածներին տիրելու համար հանդես գալու փորձերը»:

1) Ո՞ր համագումարում ընհունված բանաձևից է վերը բերված հատվածը:
2) Ե՞րբ է տեղի ունեցել այդ համագումարը:
3) Ո՞րն էր բանաձևի ընդունման առիթը (պատճառը):
4) Ի՞նչ նպատակ էր հետապնդում բանաձևի որոշումը:
5) Ինչպիսի՞ն էր իրավիճակը Հայաստանում համագումարի հրավիրման ժամանակ:
6) Ի՞նչ նոր գիտելիքներ (տեղեկություններ) ստացաք վերը բերված հատվածից: Ինչպե՞ս է այն առնչվում Ձեր ունեցած գիտելիքների հետ:
7) Ըստ բանաձևի ի՞նչ է դաշնակիզմը, ինչպե՞ս է այն բնութագրվում:
8) Ի՞նչ տեսակետներ կան փաստաթղթի վերաբերյալ: Ինչպիսի՞ն է Ձեր վերաբեր-մունքը փաստաթղթի նկատմամբ: Ի՞նչ եզրակացություններ կարող եք անել:

Գնահատման աղյուսակ

Հարցեր	Միավորներ	Ընդամենը
1 և 2	յուրաքանչյուրը 0,5 միավոր	1
3-5	յուրաքանչյուրը 1 միավոր	3

6-8	յուրաքանչյուրը 2 միավոր	6

3-9-րդ հարցերը գնահատվում են սյունակաշարով

3-5-րդ հարցեր - եթե նշվել է ընդունման պատճառը (առիթը) նպատակը ներկայացվել է ժամանակի իրավիճակը, փաստաթղթի տեղեկատվությունը կապել դասա-գրքի տեքստի հետ և կիրառելի դարձնել այն, ապա յուրաքանչյուր հարցի համար տրվում է 1 միավոր: Եթե վերը թվարկածներից որևէ մեկը չի նշվում ստանում է 0,5 միավոր, իսկ եթե նշվածները սխալ են միավոր չի ստանում:

6-8-րդ հարցեր - յուրաքանչյուրին տրվում է 2 միավոր: Եթե կատարվել է վերլուծություն, համադրությունը, փաստաթղթի տեղեկատվությունը կապվել է հենակետային գիտելիքների հետ, հաղթահարվել են հին և նոր գիտելիքների հակասությունները, կատարվել է գիտելիքների վերադասավորում: Նոր գիտելիքը կիրառվել է սովորական և ոչ ստանդարտ պայմաններում, բացահատվել փաստաթղթի պատճառահետևանքային կապերը, դրսևոր-վել է սեփական վերաբերմունք, ներկայացրել է տարբեր տեսակետներ, կատարվել է եզրակացություն: Փաստաթղթի փաստերն ու երեևույթները գնահատվել են ժամանակակցի և մեր օրերի մարդկանց դիրքերից: Եթե նշվածներից սովորողը չի կատարել միայն երկուսը, ապա ստանում է 1,5 միավոր: Եթե չի կատարել երեքը՝ ստանում է 1 միավոր: Եթե վերը նշվածներից կատարել է միայն մեկը՝ ստանում է 0,5 միավոր: Եթե ոչինչ չի կատարել՝ միավոր չի ստանում:

2. Թեմատիկ գրավոր աշխատանք

Կիրառվում է ծրագրով նախատեսված թեմայի /թեմաների/ յուրացման աստիճանը ստուգելու համար:

Թեմատիկ գրավոր աշխատանքի տևողությունը՝ 40-45 րոպե

Առաջադրանքների տիպերը՝

- **Թեստ** (այն իր մեջ ներառում է ընտրովի կամ կառուցված պատասխան պահանջող առաջադրանքներ, համապատասխանեցում, պահանջող առաջադրանքներ, ժամանակագրական հաջորդականության և սկզբնաղբյուրների իմացություն պահանջող առաջադրանքներ, ինչպես նաև՝ ծավալուն պատասխանով առաջադրանք

(շարադրանք կամ նկարագրություն պահանջող տրամաբանական, ստեղծագործական և ինքնուրույն հետազոտական առաջադրանքներ):

Առաջադրանքների բնույթը՝ տարեթվերի, փաստերի և երևույթների իմացություն, տերմինների և հասկացությունների իմացություն, գիտելիքի կիրառում, վերլուծություն, համեմատություն, համադրում, տրամաբանական եզրահանգում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

Նախընտրելի առաջադրանքի տիպերը՝

I . Առաջադրանք ճիշտ պատասխանի ընտրությամբ:

II. Կարճ պատասխան պահանջող առաջադրանք:

III. Ընդարձակ պատասխան պահանջող թեստային առաջադրանք:

IV. Ընդարձակ պատասխանով առաջադրանք (շարադրանք):

Թեստում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ.

Առաջին և երկրորդ տիպի առաջադրանքները պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքների 60%-ը:

2. Երրորդ տիպի առաջադրանքները պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքների 30%-ը:

3. Չորրորդ տիպի առաջադրանքները պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքների 10%-ը:

Առաջադրանքների ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 միավոր:

Ազատ շարադրանք պահանջող առաջադրանքները ընդարձակ պատասխանով շարադրանքներ են. բովանդակում են պատմական փաստերի և երևույթների պատճառահետևանքային կապերի բացահայտում, համադրում, տրամաբանական մտածողություն, այլընտրանք պարունակող պատմական նյութերի նկատմամբ սեփական մոտեցում, կարծիքի և տեսակետի դրսևորում, սկզբնաղբյուրների հետ աշխատանք, վերլուծական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է առավելագույնը 2 միավոր:

Առաջադրանքների քանակը՝ 17

Գնահատման առավելագույն միավորը՝ 10, որը վերածվում է գնահատման հինգբալյան համակարգի (առաջադրանքների պատասխանների գումարը բաժանվում է երկուսի):

	Առաջադրանք-ների քանակը	Առաջադրանքների տեսակը	Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի միավորը	Ընդամենը
	10 հարց	Ընտրովի և կառուցված	0,25	2,5

		պատասխանով		
	2 հարց	համապատասխանեցում յուրաք. 4 փաստից	0,25	2
	2 հարց	հաջորդականություն կազմված 4-ական և 6-ական փաստից	0,25	2,5
	2 հարց	աշխատանք սկզբնաղբյուրի հետ՝ կազմված 2 առաջադրանքից	0,25	1
	1 հարց	ազատ շարադրանք	սյունակաշար ռուբրիկ	2

<u>Ազատ շարադրանքով առաջադրանքի պատասխանի գնահատման չափորոշիչները</u>

1. 0,5 – 1 միավոր տրվում է . եթե պարզապես թվարկում է որոշ փաստեր, որոնք առնչվում են տրված հարցադրմանը:
2. 1 -1,5 միավոր տրվում է, եթե սովորողը շարադրել է տրամաբանված և բացահայտել է փաստերի պատճառահետևանքային կապերը, սակայն լիովին փաստարկված չէ:
3. 1,5 – 2 միավոր տրվում է, եթե կատարում է փաստերի վերլուծություն, տալիս է հիմնավոր ու տրամաբանական բացատրություններ ու ցուցաբերում ինքնուրույն մոտեցումներ:

3. Թեմատիկ գրավոր աշխատանք

Կիլիկիայի հայկական պետությունը XI-XII դդ.

1. Որտե՞ղ է գտնվում Կիլիկիան:

ա. Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում: **բ**. Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում:
գ. Փոքր Ասիայի հարավ-արևելքում: **դ**. Փոքր Ասիայի հյուսիս-րևմուտքում:

2. Լրացնել սխեման:



3. Հայ իշխաններից ո՞վ է նշանակվել Կիլիկիայի կառավարիչ:
ա. Ապլղարիպ Արծրունին **բ**. Վեստ Սարգիսը
գ. Գագիկ Աբասյանը **դ**. Սենեքերիմ Արծրունին

4. Ե՞րբ է հիմնադրվել Ռուբինյան իշխանությունը:
ա. 1071թ. **բ**. 1045թ.
գ. 1080թ. **դ**. 1064թ.

5. Ե՞րբ է Կոստանդին իշխանը գրավել Վահկա բերդը:
ա. 1098թ. **բ**. 1107թ.
գ. 1100թ. **դ**. 1095թ.

6. Ե՞րբ է Լևոն 2-րդը օծվել հայոց թագավոր:
ա. 1204թ. փետրվարի 10-ին **բ**. 1216թ. հունիսի 18-ին
գ. 1198թ. հունվարի 6-ին **դ**. 1194թ. սեպտեմբերի 20-ին

7. Ու՞մ օրոք է Սիսը դարձել մայրաքաղաք:
ա. Թորոս Բ-ի **բ**. Մլեհի

գ. Կոստանդինի դ. Լևոն Ա-ի

8. Որտե՞ղ է հաստատվել Բագրատունյաց վերջին գահակալ Գագիկ Բ-ն:

ա. Վահկայում բ. Տարսոնում

գ. Պապեռոնում դ. Ադանայում

9. Որտե՞ղ է թաղադրվել Լևոն Բ-ն:

ա. Ադանայում բ. Տարսոնում

գ. Սսում դ. Անարզաբայում

10. Ի՞նչ տիտղոս է ստացել Կոստանդին իշխանը խաչակիրներից:

ա. Դքսի բ. Բարոնի

գ. Կոմսի դ. Ասպետի

11.Համապատասխանեցնել իրադարձությունները և տարեթվերը:

1. Լևոն 2-րդ	ա. 1270-1289թթ.
2. Մլեհ	բ. 1184-1207թթ.
3. Լևոն 3-րդ	գ. 1187-1219թթ.
4. Լևոն 1-ին	դ. 1169-1175թթ.
	ե. 1129-1137թթ.

12.Համապատասխանեցնել իրադարձությունները և տարեթվերը:

1. Սիս և Անարզաբա քաղաքների գրավումը	ա. 1187թ.
2. Մլեհի դեմ դավադրության կազմակերպումը	բ. 1343թ.
3. Եգիպտոսի սուլթանի կողմից Երուսաղեմի գրավումը	գ. 1104թ.
4. Կիլիկյան Հայաստանի գահի անցումը	դ. 1137թ.
Լուսինյաններին	ե. 1175թ.

13. Կիլիկիայի հայկական իշխանության գահակալների անունները դասավորել ըստ նրանց կառավարման ժամանակագրական հաջորդականության.

ա. Մլեհ

բ. Լևոն Ա

գ. Ռուբեն Ա

դ. Թորոս Ա

ե. Թորոս Բ

զ. Կոստանդին

14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա. Սմբատ Գունդստաբլի մեկնումը Կարակորում:

բ. Լևոն 1-ինի գերեվարումը:

գ. Լիպարիտ սպարապետի մահը:

դ. Սսի մայրաքաղաք հռչակվելը:

15. Կարդալ մեջ բերված հատվածը և պատասխանել հարցերին:

«Անդրոնիկոս դուքսը 12 հազար հեծյալով շարժվեց ..... դեմ և նախատելով աղա-ղակեց. «Ահա քո հոր կապանքները, որով քեզ ծառա կտանենք Կոստանդնուպոլիս, ինչպես քո հորը»:

Ո՞վ է վերը բերված հատվածի հեղինակը.

1. Սմբատ Գունդստաբլը: 2. Ստեփանոս Օրբելյանը:
3. Ստեփանոս Տարոնեցին: 4. Մխիթար Գոշը:

Ու՞մ է վերը բերված հատվածում նշված խոսքերով դիմել Անդրոնիկոս դուքսը.

1. Գող Վասիլին: 2. Ռուբեն 1-ինին:
3. Թորոս 1-ինին: 4. Թորոս 2-րդին:

16. Կարդալ մեջ բերված հատվածը և պատասխանել հարցերին:

«Նա պատերազմեց շրջակա ազգերի դեմ և քաջաբար հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար»:

Ու՞մ մասին է ստորև բերված խոսքերը.

1. Լևոն 1-ինի: 2. Լևոն 2-րդի:
3. Լևոն 3-րդի: 4. Հեթում 1-ինի:

Ո՞վ է վերը բերված հատվածի հեղինակը.

1. Վարդան Արևելցին: 2. Հովհաննես Դրասխանակերտցին:

3. Ստեփանոս Օրբելյանը: 4. Կիրակոս Գանձակեցին:

17. Կարելի է Կիլիկիայի հայկական իշխանությունը գնահատել որպես նոր փուլ հայոց պետականության մեջ: Բերեք մեկ-երկու փաստարկ Ձեր տեսակետի օգտին:

_____

_____

_____

Միավորներ	Պատասխանի բովանդակությունը
2 միավոր	Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հասկանում է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանը լիարժեք է և ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային (նյութին) ճշգրիտ է և ամբողջական (ընդգրկում է բոլոր հիմնական պատմական փաստերը, երևույթները և գործընթացները): Պատասխանում ակնառու երևում է ինտեգրված գիտելիքը և դրա կիրառման արդյունքում բարձր կարգի մտածողության հմտությունների զարգացումը: Այդ կիրառումը ցույց է տալիս, որ. - սովորողն ունի զարգացած գրավոր խոսք և կարողանում է գրագետ շարադրել սեփական մտքերը: - հասկացությունները շարադրված են ճշգրիտ և բերված են համոզիչ փաստարկներ: - հասկացությունները ճիշտ են մեկնաբանված: - տարբեր աղբյուրներից ունեցած գիտելիքները համադրվել են՝ կոնկրետ խնդիրների լուծումներ գտնելու համար, առաջադրվել է դասակարգման ինքնուրույն սխեմա: - բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը: - պատասխանել է բոլոր հարցերին ու առաջադրանքները հավասարապես են նկարագրված:

	- պնդումները հիմնավորված ու փաստարկված են: - կատարվել են համարժեք և հիմնավոր եզրակացություններ:
1,5 միավոր	Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հիմնականում հասկանում է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանը ունի աննշան թերություններ, ճշգրիտ է, ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային և ամբողջական է (բացակայում է մի քանի ոչ էական պատ-մական փաստերը): Պատասխանում ակնառու երևում է ինտեգրված գիտելիքը և դրա կիրառման արդյունքում բարձր կարգի մտածողության հմտությունների զարգացումը: Այդ կիրառումը մատնանշում է, որ - սովորողի մոտ առկա է որոշակի բարձր կարգի մտածողություն. - հասկացությունները ճշգրիտ են շարադրված և բերված են հավասարակշռված փաստարկներ. - չկան հասկացությունների էականորեն սխալ մեկնաբանություններ. - տարբեր աղբյուրներից ունեցած գիտելիքները համադրվել են կոնկրետ խնդիր-ների լուծումներ գտնելու համար և առաջադրվել է դասակարգման ինքնուրույն սխեմա. - հիմնականում բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը - պատասխանում բոլոր հարցերին: Առաջադրանքները հավասարապես չեն նկարագրված - պնդումները հիմնավորված ու փաստարկված են մի շարք ապացույցների միջոցով. - ճիշտ է ընկալվել պատմական փաստերի, հասկացությունների, երևույթների իմաստն ու էությունը. - կատարվել է համարժեք և հիմնավոր եզրակացություններ:
1 միավոր	Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հիմնականում հասկացել է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանը ունի թերություններ, հիմնականում ճշգրիտ է, գրեթե

	ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային (բացակայում են որոշ էական պատմական փաստեր, երևույթներ և գործընթացներ): Պատասխանում երևում է յուրացված գիտելիքը և դրա կիրառման արդյունքում բարձր կարգի մտածողության որոշակի հմտությունների զարգացումը: Այդ կիրառումը մատնանշում է որ. - հասկացությունները ճշգրիտ են շարադրված և բերված են հավասարակշռված փաստարկներ. -կան որոշ հասկացությունների էականորեն սխալ մեկնաբանություններ. - բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև. եղած որոշ պատճառահետևանքային կապերը - պատասխանում բոլոր հարցերին: Առաջադրանքները հավասարապես նկարագրված չեն. - պնդումների մի մասն է միայն հիմնավորված ու փաստարկված ապացույցների միջոցով. -հիմնականում ընկալվել է պատմական փաստերի, հասկացությունների, երևույթների իմաստն ու էությունը. - կատարվել է որոշ եզրակացություններ:
0,5 միավոր	Պատասխանում երևում է բովանդակության վերաբերյալ սովորողի նվազագույն առկայությունը: Նշվում է կոնկրետ պատմական փաստեր, տրվում՝ որոշ երևույթների նկարագրությունը: Պատասխանը առնչվում է ստուգվող գիտելիքին կամ հիմնահարցին, բայց բացակայում է բավարար շարադրանքը և գիտելիքների կիրառման հմտությունները: Շարադրանքում առկա են. - հասկացությունների ոչ ճիշտ մեկնաբանություններ. - մեծ քանակությամբ փաստական սխալներ, անկանոն մտքեր, խոսքը կապակցված չէ, մեկնաբանությունները սխալ են և ոչ հիմնավորված. - պատասխանը մասամբ է համապատասխանում ստուգվող ուսումանական նյութի բովանդակությանը, կան լուրջ շեղումներ ու բացթողումներ. - բացակայում են համապատասխան եզրակացությունները:

0 միավոր	Պատասխանը ամբողջությամբ սխալ է կամ էլ առնչություն չունի ստուգվող ուսումնական նյութի բովանդակության և հիմնախնդիրների լուծման հետ: Կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը:

4. ԳԾԱԿԱՐԳԵՐ

1. Սովորողներին թույլ է տալիս վարժվել, կրկնել, կիրառել և կատարելագործել գիտելիքները:
2. Խթանում են ստեղծագործական ուժերը և ինքնատիպ մտածողությունը:
3. Գիտելիքների յուրացման կարողությունների զարգացման չափանիշներ է առաջադրում:
4. Տեսանելի է դարձնում սովորողի ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

1 միավոր

1. Հրաժարվում է կամ չի ներկայացնում աշխատանքը:

2 միավոր

2. Մշակված աղյուսակներում, գծագրերում, դիագրամներում. նշում է 1-2 թերի փաստեր:

3 միավոր

3. Մշակված աղյուսակները, սխեմաները, դիագրամները լրացնում է էական բացթողումներով, անորոշ բացատրություններով:

4 միավոր

4. Աղյուսակի, սխեմայի, դիագրամի, ուրվագծային քարտեզի վրա թվարկում է մի քանի պատմական փաստեր բացթողումներով, նկարագրում իրադարձությունները, նշում տեղանունները որոշ անճշտությամբ:

5 միավոր

5. Ինքնուրույն կարողանում է լրացնել տրված աղյուսակը, դիագրամը, ուրվագծային քարտեզը, կարողանում է տալ պարզունակ բացատրություններ, սեղմագիր կամ պայմանական նշաններով ձևակերպում բովանդակությունը, թույլ տալով որոշ անճշտություններ:

6 միավոր

6. Ինքնուրույն կարողանում է ստեղծել նյութի բովանդակությունը պարունակող կամ պատկերող պարզունակ սխեմաներ, դիագրամներ, աղյուսակներ, սակայն բովանդակության մեջ թույլ տալով մասնակի անճշտություններ, որոնք դասախոսի միջամտությամբ կարողանում է ուղղել:

7 միավոր

7. Սկզբնաղբյուրներ կամ պատմական այլ լրացուցիչ նյութեր ուսումնասիրելով կարողանում է գծել տեղային քարտեզներ և դասի բովանդակային մասը համակարգված ներկայացնել որևէ գծակարգի միջոցով թույլ տալով որոշ անճշտություններ, որոնք միջամտելու դեպքում հեշտությամբ ուղղում է:

8 միավոր

8. Ստեղծում է ինքնուրույն գծակարգեր, տարբերում է գլխավորը երկրորդականից, օգտագործում է պատմական տերմիններ, նշում է հիմնական տեղանունները, թվարկում մի քանի պատճառներ և հետևանքներ, օգտագործում է լրացուցիչ նյութեր թույլ տալով ոչ էական անճշտություններ, որոնք միջամտելու դեպքում ինքնուրույն ուղղում է:

9 միավոր

9. Ստեղծում է ինքնուրույն գծակարգեր, մասնակի թերություններով, բայց ամբողջական ներկայացնում բովանդակությունը, տարբերում գլխավորը երկրորդականից, օգտագործում պատմաաշխարհագրական տերմիններ, մանրամասը նշում պատճառները և հետևանքները, վերլուծում արդյունքները, փորձում ինքնուրույն գնահատել պատմական իրադարձությունը:

10 միավոր

10. Կազմում է ինքնուրույն գծապատկեր, ներառելով մանրամասներ, լրացուցիչ տեղեկություններ, փաստեր, կատարում համեմատություններ, արդյունավետ ներկայացնում պատճառները և հետևանքները, ցույց տալիս պատմական երևույթների զարգացման հաջորդականությունը սխեմատիկ տեսքով, օգտագործում իլյուստրացիաներ: Կարողանում է արժևորել և ճիշտ գնահատել ատմական երևույթը:

5. Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիրառվում է ուսումնական կիսամյակի վերջում, ամբողջ ծրագրային նյութը ուսումնասիրելուց հետո: Կիրառվում է գրավոր եղանակը:

Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքի տևողությունը 45 կամ 90 րոպե է:

Առաջադրանքների տիպերը՝

- Թեստ (այն իր մեջ ներառում է ընտրովի կամ կառուցված պատասխան պահանջող առաջադրանքներ, համապատասխանեցում, խմբավորում, ժամանակագրական հաջորդականության և սկզբնաղբյուրների իմացություն պահանջող ինչպես նաև՝ պատճառ-հետևանքային կապերի իմացությունը ստուգող առաջադրանքներ:

Առաջադրանքների բնույթը՝ տարեթվերի, փաստերի և երևույթների իմացություն, տերմինների և հասկացությունների իմացություն, գիտելիքի կիրառում, վերլուծություն, համեմատություն, համադրում, տրամաբանական եզրահանգում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի համար (45 + 45 րոպե): **Առաջադրանքների քանակը՝** (դասերի քանակից ոչ պակաս):

Գնահատման առավելագույն միավորը՝ 20:

Նախընտրելի առաջադրանքի տիպերը՝

I . Առաջադրանք ճիշտ պատասխանի ընտրությամբ:

II. Կարճ պատասխան պահանջող առաջադրանք:

III. Ընդարձակ պատասխան պահանջող թեստային առաջադրանք:

Թեստում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ.

1. Առաջին և երկրորդ տիպի առաջադրանքները պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքների 75%-ը:

2. Երրորդ տիպի առաջադրանքները պետք է կազմեն ամբողջ թեստի առաջադրանքների 25%-ը:

Օրինակ՝

Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հայկական հարցի վերաբացումը

բ) Սևրի պայմանագրի կնքումը

գ) Բեռլինի կոնգրեսի գումարումը

դ) Արևելյան հարցի ծագումը

ե) Հայկական հարցի բարձրացումը Պոտսդամում

Օրինակ՝

Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվան հետ

ա) «Ոտնահարված սրբություն»

բ) «Հայերի ջարդը Տրապիզոնում»

գ) «Անլռելի զանգակատուն»

դ) «Ոտքի՛, դատարանն է գալիս»

ե) «Ռանչպարների կանչը»

1) Հ. Այվազովսկի

2) Խ. Դաշտենց

3) Պ. Ջեյթունցյան

4) Պ. Սևակ

5) Վ. Սուրենյանց

IV խմբի առաջադրանքները ընդարձակ պատասխանով շարադրանք են. բովանդակում են պատմական փաստերի և երևույթների պատճառահետևանքային կապերի բացահայտում, համադրում, տրամաբանական մտածողություն, այլընտրանք պարունակող պատմական նյութերի նկատմամբ սեփական մոտեցում, կարծիքի և տեսակետի դրսևորում, սկզբնաղբյուրների հետ աշխատանք, վերլուծական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

Օրինակ՝

Համեմատե՛ք Բաթումի և Սևրի պայմանագրերը:

Ինչու՞ է Հայկական հարցը դիտվում Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս:

Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 3 միավոր:

Պատասխանի գնահատման չափորոշիչները:

1 միավոր - եթե պարզապես թվարկում է որոշ փաստեր, որոնք առնչվում են տրված

հարցադրմանը:

2 միավոր - եթե տալիս է որոշ բացատրություններ ու հիմավորումներ հարցի վերաբերյալ:

3 միավոր - եթե պատասխանում բերված են գլխավոր փաստարկները, առկա են հիմնավոր ու տրամաբանական բացատրություններ:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է առաջադրանքների պատասխաններից սովորողի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 5 միավորանոց համակարգի (այսինքն՝ առաջադրանքների պատասխանների գումարը բաժանել չորսի):

6. Վարժություններ*

Վարժություն 1.

Առանց որևէ գրքից օգտվելու՝ ձեր բառերով լրացրե՛ք ստորև տրված նախադասությունները.

1. Ազգ է կոչվում ----------

---------- :

2. Միապետական բռնատիրության շահագործումների և կեղեքումների դեմ ժողովրդի պայքարի ամենացայտուն օրինակն է ----------
---
---------- :

3. Ազգային գաղափարը վերածվում է ազգայնամոլության, երբ ----------
---
---------- :

4. Ժողովրդավար երկրների սահմանադրության հիմքն են կազմել՝ ----------
---------- :

5. Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո՝ 1792թ.-ին, Ազգային համագումարը (Կոնվենտ) ----------
---------- :

6. Սոցիալիստական գաղափարախոսությունը ծնունդ առավ ----------
---------- :

7. Որոշ սոցիալիստ գործիչների հայանպաստ կեցվածքը հիմնված է եղել --------
---------- :

Վարժություն 2.

Մի շարք բառերի և հատուկ անունների բացատրությունները տրված են ներքևի աջ սյունակում: Գտե՛ք այդ բառերը և տառ առ տառ գրե՛ք ձախ սյունակի գծիկների վրա:

_ _ _ _ 13 28	1. _____ -ի գործը XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարի արտահայտություններից էր:
_ _ _ _ _ _ _ _ _ _ 3 30 20 27	2. _____ _____ -ի պես, Հովսեփ Էմինն էլ եվրոպական պետությունների օգնությունը հայցեց:
_ _ _ _ _ _ _ _ _ _ _ 29 18 11 1 37 24 12	3. Հայերի մեջ այս տարրի հարուցած դժվարությունները Էմինի ծրագրերի ձախողման պատճառներից էին:
_ _ _ _ 15 39 34	4. Էմինը գրում էր, թե «սև հայերը» _____ էին գործածում և իրենց ազատությունը պաշտպանում:
_ _ _ _ _ _ 4 7 38 23	5. _____ -ի Եսայի կաթողիկոսը ղարաբաղցի հայ զինվորներով ռուսական զորքին դիմավորելու գնաց:
_ _ _ _ _ _ _ _ _ 10 43 17 47	6. Այս դաշնագիրը կնքվեց 1813-ին՝ ռուսների ու պարսիկների միջև:
_ _ _ _ _ _ 16 42	7. Դեպի _____ շարժվելու փոխարեն, Պետրոս Մեծն իր բանակը ետ քաշեց:
_ _ _ _ _ _ 44 41	8. Արևելահայությունը մենակ մնաց _____ ցեղերի հարձակումների դեմ:
_ _ _ _ _ _ _ _ _ 26 8 19	9. 1562-ին Միքայել _____ կաթողիկոսը ժողով է հրավիրում՝ Եվրոպա պատվիրակություն ուղարկելու համար:
_ _ _ _ _ _ 45 46 35	10. _____ -ի և Արցախի հայությունը գործնականում ինքնիշխան էր և իր մելիքներն ուներ:
_ _ _ _ _	11. _____ - _____ -ը պարսից

_ _ _ թագավոր _____ Բ.-ից ստացավ Սյունիքի
2 նահանգապետությունը:
5 40

_ _ _ _ _ _
14 31

_ _ _ _ _ _ _ 12. 1828թ. _____
_ _ պայմանագրով Ռուսաստանը տիրացավ Երևանի և
9 36 32 _____ -ի խանություններին:
22

_ _ _ _ _ _ _
_
33 6 25
21

Այժմ ներքևի նախադասությունը կազմելու համար, նշված թվերի վերևում եղած տառերը գրե՛ք ներքևում նույն թիվն ունեցող գծիկի վրա: Ճիշտ լրացնելու դեպքում կստանաք այն պատգամը, որը Հայ դատը սերտող յուրաքանչյուր սովորող պետք է յուրացնի:

_ _ _ _ _ _ _ ը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _
1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

_ _ _ _ _ _ _ _, _ _ _ _ _ _ _ _ _ _ _
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

_ _ _ _ _ _ _ _ ը:
40 41 42 43 44 45 46 47

Վարժություն 3.

Ներքևի նախադասությունները լրացրե՛ք՝ ա կամ բ պատասխաններից մեկը ընտրելով. ճիշտ պատասխանի առջև + նշանը դրե՛ք և ձեր բառերով նախադասությունը վերաշարադրե՛ք:

1. Օսմանյան կայսրությունը ուժեղ պահելու համար Անգլիան բարենորոգումներ էր պարտադրում սուլթանին, որպեսզի ----------
---

--- :

ա. Մեկ այլ պետություն չկարողանա տիրանալ նեղուցներին և Անգլիայի առջև Հնդկաստանի ճանապարհը փակել:

բ. Հայերի դժգոհությունները առիթ չտան այլ մեծ տերություններին՝ կայսրությունը քայքայելու:

2. Բեռլինի վեհաժողովում վերանայվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը՝ ---------- :

ա. Հայկական բարենորոգումների գործադրումը արագացնելու համար:

բ. Օսմանյան կայսրության մեջ Ռուսաստանի ազդեցության առաջն առնելու համար:

3. Ֆրանսիան բազմիցս հայերի շահերը պաշտպանեց կայսրության մեջ, որովհետև ---------- :

ա. Ցանկանում էր իր մշակութային ազդեցությունն ամրապնդել:

բ. Կայսրության ուժեղացումն ու հարատևումը նպատակ չէին նրա համար:

4. Եվրոպական պետությունների միջամտությունը ի շահ հայերի՝ ---------- :

ա. Սուլթանի մեջ կասկած առաջացրին, և նա ավելի ու ավելի խստացրեց հալածանքը:

բ. Սուլթանին պարտադրեցին բարենորոգումներ կատարել և հայերի կյանքը կայսրության մեջ բարելավել:

Վարժություն 4.

Ներքևի նախադասությունները, ըստ ժամանակագրական հերթականության, իրար ետևից գրե՛ք՝ յուրաքանչյուրի առջև նշելով նաև տվյալ իրադարձության թվականը՝ սկսելով ամենահնից: Եթե պետք է, հավելումներ կատարե՛ք, որպեսզի գրությունը շարադրության ձև ստանա:

**Անգլիան Եգիպտոսը գրավեց:

**Խրիմյան Հայրիկը քննություն բացեց Արևմտահայաստանի իրավիճակի մասին:

**Ալեքսանդր Բ-ի օրոք Կովկասում նոր վարչական բաժանումներ կատարվեցին և ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը:

**Ստորագրվեց Բեռլինի պայմանագիրը:

**Պայմանագրի 16-րդ հոդվածը պարտադրում էր սուլթանին անհապաղ բարենորոգումներ կատարել հայկական նահանգներում:

**Հայկական բարենորոգումները մոռացվեցին:

**Գլադստոնը փոխարինեց Դիզրայելուն:

**Հայերը դիմեցին Մեծ իշխան Նիկոլային, որպեսզի Ռուսաստանը պաշտպանի հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու հարցը:

**Հրապարակվեց «Պոլոժենիե» կոչված կայսերական հրամանագիրը:

**Սպանվեց Ալեքսանդր Բ-ն, և Լոռիս-Մելիքովը հեռացվեց ասպարեզից:

**Անգլիան տեր դարձավ Կիպրոսին:

--- :

Վարժություն 5.

Ներքևի նախադասությունները պնդումներ են, որոնցից մի քանիսն իրականությանը համապատասխանում են, իսկ մի քանիսը՝ ոչ: + և X նշաններով բնորոշե՛ք այդ պնդումները. ապա ընդլայնե՛ք պնդումը, կամ գրե՛ք պատճառը, թե ինչու՞ է դա սխալ:

1. _____ Բեռլինի վեհաժողովում փոխվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի հայանպաստ հոդվածը և ----------
---
--- :

2. _____ Սան Ստեֆանոյում և Բեռլինում արծարծվեց Հայկական հարցը և լուծում տրվեց դրան. ուրեմն՝ այդ երկու պայմանագրերը շրջադարձ են արձանագրում Հայկական հարցի պատմության մեջ: ----------
---
--- :

3. Հայ քաղաքական մտքի զարգացման պատմության մեջ շրջադարձ է Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների արդյունքը, որովհետև ----------
---
--- :

4. Զեյթունի 1862թ. ապստամբությամբ սկսվեց հայ հեղափոխական շարժումը:

--- :

5. Հայ ժողովրդին ազատագրելու և օսմանյան լուծը թեթևացնելու համար երիտասարդության խորհած հեղափոխական միջոցները դուր չէին գալիս պահպանողական խավին: ----------
--- :

6. Կովկասում կազմված հայկական ընկերությունների բուն նպատակն էր կրթություն և լուսավորություն տարածել կովկասահայության մեջ: ----------
---
--- :

7. Նախահեղափոխական շրջանում քաղաքական խմբակցությունները ձգտում էին Արևմտահայաստանի անկախությանը կամ առնվազն նրա գրավմանը ռուսների

կողմից: ----------
---------- :

Վարժություն 6.

Ձախ սյունակում տեղ գտած հայկական հաստատությունը կամ կազմակերպությունը գծով միացրե՛ք աջ սյունակում բերված նույնի բացատրությանը:

Մշակ	1874թ. կազմվեց Մեծ Ղարաքիլիսայում, բայց դադարեց հաջորդ տարին՝ անդամների ծերբակալումով:
Բարենպաստ ընկերություն	Այս խմբակցությունը դարձավ Երիտասարդ Հայաստանի կորիզը:
Երիտասարդ Հայաստան	Այս նշանաբանով կազմվում էին խմբակցություններ և գործում էին արևմտահայության ազատագրման համար:
Հայրենյաց սիրո գրասենյակ	1868թ. կազմվեց Ալեքսանդրապոլում. նպատակն էր՝ արևմտահայության ազատագրման համար միջոցներ խորհել:
Դեպի Երկիր	Հոսանքը սկսել էր 1872թ. Գրիգոր Արծրունու շուրջ, որ նույնանուն թերթն էր հրատարակում:
Դրոշակ	1889թ. կազմվեց Թիֆլիսում և նպատակ ուներ ի մի բերել գործող բոլոր կազմակերպություններին:

Վարժություն 7.

Կարդացե՛ք ազատագրական պայքարի հերոս ֆիդայիների մասին և կատարե՛ք այս առաջադրանքը: Աջ սյունակում տրված են ձախ սյունակի անունների վացատրությունները. գտե՛ք այդ անունները և գրե՛ք գծիկների վրա: Ապա ձեր գրած անունները գտե՛ք ներքևի աղյուսակում և շրջագծով բաժանե՛ք:

1. _____	Ախլաթի, Բաղեշի ու Սասնա հերոսը
2. _____	Բանկ Օտոմանի գրավման ղեկավարը, որն ընկավ առաջին որպեներին

3. _____ ընկերոջ զոհվելուց հետո ղեկավարեց Բանկ Օտոմանի գրավումը:

4. _____ ծպտված հեղափոխականուհին, որ սուլթանի մահափորձը պետք է իրագործեր

5._____ Առաքելոց վանքում ապաստան գտած ֆիդայական խմբի ղեկավարը

6. _____ Սերոբի կինն ու զինակիցը

7. _____ Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատարը

8. _____ Խանասորի արշավանքի չորս ղեկավարները

խ	ե	չ	ա	բ	կ	ու	ճ	կ	լ	ա
ա	է	բ	ց	ք	ե	ռ	ի	դ	ր	ղ
դ	ղ	ա	զ	ի	տ	ն	շ	բ	ա	բ
ռ	ու	բ	ի	ն	ա	ճ	խ	ո	ր	յ
ճ	ե	կ	յ	ր	ռ	չ	ա	բ	մ	ու
հ	վ	ե	դ	ո ւ	չ	վ	ն	ա	ե	ն
ա	վ	ն	ց	չ	ր	բ	ե	մ	ն	ա
դ	ա	ս	ա	ր	ա	ս	ո ւ	մ	գ	տ
գ	ր	յ	չ	տ	ո	ց	ե	լ	ա	ս
տ	դ	ու	ք	ս	դ	ր	ա	ր	ր	ո
բ	ա	ն	կ	օ	փ	խ	ե	չ	ո	ճ
օ	ն	ի	ջ	ե	թ	թ	ո	մ	ա	բ

*Վարժություններ կազմելիս կարող եք օգտվել Ռ. Փիրումյանի «Հայկական հարցի պատմություն» դասընթացի աշխատանքային տետրից (9-10-րդ դասարաններ, Երևան, 2002):

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995:
2. Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996:
3. Ղազարյան Ա. Ս., Հայկական հարցի ծագումն ու բովանդակությունը: Դասախոսությունների համառոտագիր, Երևան, 2008:
4. Փիրումյան Ռ., Հայկական հարցի պատմություն, Երևան, 2000:
5. Փիրումյան Ռ., Հայկական հարցի պատմություն, Հանրակրթական դպրոցների 9-10-րդ դասարանների դասագիրք, Երևան, 2002:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

1. Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:
2. Ադոնց Ն., Հայկական հարց, Երևան, 1996:
3. Աճառեան Հ., Տաճկահայոց հարցի պատմութիւնը (Սկզբից մինչեւ 1915թ.), Նոր-Նախիջեւան, 1915:
4. Ամուրեան Ա., Հայ Դատ: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977:
5. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Երևան, 1990:
6. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
7. Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Երևան, 1989:
8. Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969:
9. Բարդակչյան Գ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան 1991:
10. Բարսեղյան Լ., Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, Երևան, 1999:
11. Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998:
12. Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990:
13. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999:
14. Գևորգյան Հ. Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Երևան, 1997:

15. Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը, 1945թ. հուլիսի 17 – օգոստոսի 2: Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1989:
16. Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965:
17. Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993:
18. Թառոյան Կ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնապետության դեմ (1878-1908թթ.), Երևան, 2001:
19. Թերզեան Հ., Կիլիկիոյ աղետը, Կ.Պոլիս, 1912:
20. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:
21. Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914թ., թարգմ. Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915:
22. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
23. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946:
24. Լազյան Գ., Հայաստանը և Հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1996:
25. Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970:
26. Լեո, Անցեալից, Յուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925:
27. Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915:
28. Լեփսիուս Յ., Հայաստանի ջարդերը, Կ.Պոլիս, 1919:
29. Խաթանասեան Ե., Հայ ժողովրդի թիւը Թուրքիաում մինչեւ 1915թ., Բոստոն, 1965:
30. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930:
31. Խանլարեան Կ., Մահմեդականացած հայութիւնը ժամանակակից Թուրքիայում, «Հայոց պատմութեան հարցեր», թիվ 5, Երևան, 2005:
32. Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, 1999:
33. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003:
34. Կարապետյան Մ., Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005:

35. Կիրակոսյան Ա. Ջ., Ակնարկներ հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006:
36. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:
37. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 1, Երևան, 1982, Գիրք 2, Երևան, 1983:
38. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914թ.), Երևան, 1999:
39. Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:
40. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Երևան, 1999:
41. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000:
42. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
43. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:
44. Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919:
45. Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր, մաս 1-3, Երևան, 1995:
46. Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, 2002:
47. Մաթոսյան Տ., Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ, Երևան, 2005:
48. Մեվլան Ջաղե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990:
49. Նասիբյան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923թթ., Բեյրութ, 1994:
50. Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները: Հոդվածների ժողովածու, Երևան, 2007:
51. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2000:

52. Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004:
53. Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան – Ռուսաստան – Թուրքիա, Երևան, 1995:
54. Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
55. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
56. Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:
57. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992:
58. Տասնապետյան Հ., Հայկական հարցը, Բեյրութ, 1977:
59. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, հ. Ա, Երևան, 1994:
60. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
61. Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:
62. Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ - Բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921), Երևան, 1997:

Ծանոթություն

Լրացուցիչ գրականությունը խորհուրդ է տրվում օգտագործել ռեֆերատներ, զեկուցումներ պատրաստելու և գործնական աշխատանքների ընթացքում: